1090
L. IV. 6

+

ԱՐԱՐԱՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԶԵՓԵՐՈՒՆԻ ԲԱՆԵՐՈՒՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔԻ

ՏԵՍՐԱԿԱՆ

Ի ՎԻԵՆՆԱ

1858

ԸՆՈՒԸՆԿ

ԲԱԺԱՆՈՐԴԱՑ Ա· ՏԵՏՐԱԿԻՍ

Աղեքսանդր Թաւրիզեանց։
Աղեքսանդր Մատաթեանց։
Աղեքսանդր Յարութիւնեանց։
Աղեքսանդր Շանշիեանց։
Александръ Яньковъ.
Աստուածատուր Եագուլեանց։
Աստուածատուր Ֆապրիքեանց։
Բաղդասար Տէր Աստուածատրեանց
Բարսեղ Ամիրեանց։
Բարսեղ Մանդենեանց։
Բարսեղ Տէր Ստեփանեանց։
Գէորգ Դաւթեանց։
Գէորգ Եղիազարեանց։
Գէորգ Հէջուբեանց։
Գէորգ Քանանեանց։
Գրիգոր Ալէլեանց։
Գրիգոր Եղիազարեանց։
Գրիգոր Շահազիզեանց։
Գրիգոր Պոնդոյեանց։
Գրիգոր Ֆապրիքեանց։
Դանիէլ Բուրջալեանց։
Դաւիթ Խանդամիրեանց,
Եպիփան Պոպովեանց։
Զաքար Աղամիրզեանց։
Իսահակ Տէր Միքայէլեանց։
Խաչատուր Դաւթեանց։
Հայրապետ Սուքիասեանց։
Հայրապետ Վարդազարեանց։
Մարգար Եղիազարեանց։
Մարտիրոս Տէր Մկրտչեանց։
Մինաս Արասխանեանց։
Միքայէլ Շահպարունեանց։
Միքայէլ Քալանդարեանց։
Միքայէլ Քիշմիշեանց։
Մկրտիչ Բուրջալեանց։
Մկրտիչ Յովհաննիսեանց.
Մկրտիչ Վարդանեանց։
Մովսէս Անանեանց։
Մովսէս Բուրջալեանց։
Յակոբ Բուրջալեանց։
Յակոբ Պապոյեանց։
Յակոբ Տէր Ստեփանեանց։
Յարութիւն Մուլթանեանց։
Յարութիւն Վարդանեանց։
Յովհաննէս Գուրգինբէգեանց։
Յովհաննէս Եղեանց։
Յովհաննէս Թաւրիզեանց։
Յովհաննէս Խաղիսեանց։
Յովհաննէս Յովնանեանց։
Յովսէփ Անանեանց։
Յովսէփ Իզմիրեանց։
Ներսէս Յովհաննիսեանց։
Նիկողայոս Ալադաթեանց։
Նիկողայոս Ալէխանեանց։
Նիկողայոս Եղեանց։
Նիկողայոս Մամիկոնեանց։
Николай Михайловъ.
Նիկողայոս Պիտոյեանց։
Նիկողայոս Փուղինեանց։
Ոսկան Յովհաննիսեանց։
Սեդրաք Մանդենեանց։
Սմբատ Շահազիզեանց։
Սողոմոն Մարկոսեանց։
Ստեփաննոս Եղիազարեանց։
Ստեփաննոս Փուղինեանց։
Վասակ Մատաթեանց։
Василій Шимановскій.
Викторъ Романовъ.
Петръ Хохловъ.

ԺՈՒԱՔԱՂ

ՅԱՐՁԱԿ ԵՒ Ի ՀԱՓԱԾՈՅ ՐԱՆԻՑ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ

Մ. Մ. ՄՍԵՐԵԱՆՑ

ԵՒ

Զ. ՄՍԵՐԵԱՆՑ

«Լաւագոյն է ճոռոգաբանութիւնք
Եկրեմի քան զկուրթան Աբիսալերայ»։
Դոպ. Է. 2։

ՏԵՏՐԱԿ Ա.

ՏՊԱԳՐԵԱԼ

ԱՐԴԵԱՄԲՔ ԵՒ ԾԱԽԻՒՔ Պ. ՅՈՎՍԷՓԱՅ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ ԻԶՄԻՐԵԱՆՑ

ՂԶԼԱՐԵՑՒՈՅ

Ի ՄՈՍԿՈՒԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ

1858

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. С. Петербургъ, 25 Ноября 1857 года.

Цензоръ И. Лажечниковъ.

ԱՌ ԻՄԱՍՏԱԽՆԴԻՐՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐ

ՐԱԲԵՏՈՒԱԾԻԿ Պ. ՅՈՎՍԷՓ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ

ԻՄԱՍԻՐԵԱՆՑ

Ո՛ որ իբրու նոր ոմն առ մեզ Մեկենաս,
Որոց 'ի գիրս երկասիրեն՝ ձեռքն տաս,
Ընկալ սիրով զոր իզձ էր Վռ անյասպաղ
Տալ 'ի մամուլ, ըղնախընծայս ՀՈՒԱՐՔԱՂ։

Մ. Մ.

ՕՆԿՈՒՅՈՒՄՆ

—

Որովհետև շնորհք անբաւաղօրին Աստուծոյ առաւելու օր ըստ օրէ (որպէս լսեմքս և տեսանեմք) և յԱղդայինս մեր ամենայն ուրեք արժանագովելին տենչ բանասիրական ուսմանց, ընդ նմին և սէր առ ընթերցումն գրոց, պարտ անձին վարկաք և մեք առ օգտի մերոյինս ամենասիրելի Հայազգեաց՝ մատակարարել նոցա սակաւաթերթ տետրակաւ ըստ մերում կարի՝ ոչ ողկոյզս մեծամեծս (ամբողջ մատենագրութիւնս), այլ՝ ճիռս մանունս քաղեալս յարձակ և 'ի չափածոյ բանից հին և նոր մատենագրաց, և առաւել՝ 'ի գրուածոց չէ ընդ մամլով գրատպութեան մտելոց։

'Ի տետրակի սոսա, որպէս և յայլն զոր ունիմք 'ի լոյս հանել հետ զհետէ, յօժարիմք դնել ոչ միայն զհնոցն մատենագրաց՝ այլ և զնորոցն զաղդի ազգի հիւսուածս բանից, եթէ 'ի գրոցն կանոնաւոր բարբառ և եթէ յաշխարհիկն անկանոն։ Զառաջինսն տամք 'ի վայելումն քաջահմտից և սիրողաց Հայկեանս բազմահարուստ և բարգաւաճ Դպրութեան, և զվերջինսն՝ առ 'ի զբօսանս՝ ռամկականաւն և եթ շատացելոց աղքատին լեզուաւ։

,,Ամենայն դպիր աշակերտեալ արքայութեան երկնից, նման է առն տանուտեառն՝ որ հանէ 'ի գանձէ իւրմէ զնոր և զհին,,։

Մատթ. ԺԳ. 52։

ՁԱՐԱԿԱՆ

ՅԱՐԶԱԿ ԵՒ Ի ՁԵՓԱԾՈՅ ԲԱՆԻՑ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

Ի ԲԱՆԻՑ ՀԻՆ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ

ԹԷՈԴՈՐՈՍԻ ՄԻԱՅՆԱԿԵՑԻ *)

ԳՈՎԵՍՏ Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ ԵՒ Ի ՄԻՇՏ - ԿՈՅՍՆ ՄԱՐԻԱՄ **)

Զ՝ԲԱՆԱՒՈՐ և զներանձնեան տաճար սքանչելագործութեան ամենարարեալ կարգաւորութեամբ և վայելչակազմութեամբ զարդարեալ երկնից ընակողին՝ զմաքուր և զպարկեշտասէր առագաստ հարսնութեան փեսայացեալ Բանին Հօր՝ զՄարիամ կոյս Աստուածածին, համարօրհնեալ հաւատով սրբոյ Երրորդութեանն, ընդհանրական առաքելաշէն եկեղեցիք Քրիստոսի, փառատրողական երգաբանութեամբ, հոգեզուարճ նուագարանաք վերագոչեսցուք 'ի սերկեան աւուրս դասախմբութեամբ։

Վասն զի յայսմ աւուր ընկալան մեծարգոյ աւետիք բոլորաբնակ տիեզերք. քանզի Հօր հաւասար Բանն Աստուած՝ զՀօր համադոյակիցն ունելով յինքեան զՀոգին կենաց, ծնաւ այսօր 'ի Բեղղէեմ յարքայաշէն քաղաք Դաւթի, վասն զի 'ի Բեղղէեմ լայաւ դուռն դրախտին. զի Բեղղէեմ թարգմանեալ կոչի ըստ Երրայեցւոյն՝ երդումն

---

*) Սա է Քռոնենաւորն (խաբաշապիկոս) մականուանեալ՝ Թէոդորոս վարդապետ՝ վարժապետ Յովհաննու Խմաստասիրի Օձնեցւոյ և այլոց, ծաղկեալ յեօթներորդ դարու։ Տես 'ի Զամչ. պատ. հայ. հատ. Բ. էջ 361, 588։ Ծանօթ. Մ.

**) Զձառս զայս ընդօրինակեալ է իմ յամի Տեառն 1830 'ի Ս. Էջմիածին, 'ի քաւածալ և 'ի բոլորագիր ձառ-ընարէ գրելոյ 'ի թուին հայոց պղա։ Ծանօթ. Մ.

իւր։ Յաղագս որոյ յանձն իւր երդուաւ անսուտն Յեսութեան՝ նախագուշակ մարգարէութեամբն, և հաստատեալ կատարեաց զբանս ծառայից իւրոց, և զնորհուրդս պատգամաբեր հրեշտակացն արդարացոյց։

Այսօր աւետալուր և ուրախաբեր ձայն հրեշտակապետին առ կոյսն Մարիամ կարապետող՝ վանդիւք տարահնչող ձայնեալ ընդ բոլոր համատիեղերս, թէ ,,Ծնաւ ձեզ փրկիչ, որ է օծեալ տէր, 'ի քաղաքի Դաւթի,,։

Այսօր մեծ խնդութիւն ամենայն տիեզերաց. քանզի բացաւ դուռն արևելեան՝ աստղանշան ճանապարհաւն մոգս հանելով ընծայարերս՝ երկնաւոր հրեշտակաց արքային մատուցանելով ոսկի արքայական ինքնահողաբուսակ՝ արուեստահնարագործութեամբ մաքրաղտեալ [1]) և գունազարդեալ 'ի շողիւնս հրալուսաճաճանչադեղնութեանն, կընդրուկ երևելի անուշահոտութեամբ, և զմուռս պիտանի և խորհրդայեղց. ոսկի՝ որպէս ինքնակալ և յաղթող թագաւորի, կընդրուկ՝ որպէս Աստուծոյ երկնաւորի և մարդասէր բարեկամողի, իսկ զմուռս՝ որպէս ինքնայօժար վասն մեր մեռելոյ և յերկրի թաղելոյ, որ նշանակէ իսկ զմեր խաչելութիւնն և յերկրաբերձ քաղաքականութեանցս մեռանել՝ ըստ Պաւղոսի առաքելախօս վարդապետութեանն, թէ ,,Սպանէք զանդամս ձեր զերկրաւորս,,. և եթէ ,,Մեռարուք դուք, և կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսիւ Աստուած,,։

Արանցի յարևելից ուղևորեալ մոգուցն աստղանշան ուղևորութեամբ, որ զմիւսանգամ յանկարծահաս փայլակնացայտ յարևելից զփառապարգև գալուստն Քրիստոսի նշանակէ, որ հատուցանէ սիրոցաց իւրոց պարգևս բարեաց։

Եւ դարձեալ, որպէս ծնաւ 'ի Բեղղէէմ յառաջին գալստեանն, և արար խաղաղութիւն 'ի մէջ երկրի՝ ըստ Դաւթայ, սոյնօրինակ և յերկրորդումն եկեսցէ լուսազգեստ ըստ լուսատեսակն վարուց՝ և հայրենական փառաւք և իշխանութեամբ՝ դատել զտիեզերս ամենայն։

Դարձեալ, հրեշտակական աւետարանութեան և գովասանութեան համաձայնակից գոլով իմ յաւետախաղաց հրճուասիրութեամբ, 'ի նոյն յորդորումն համանմանեալ յարաձգիմ՝ վերագունիցն հանճարեղաց առասանութեամբ, ներբողածանօթ հանդիսիւք։ Վասն զի

Այսօր աւարտագործեալ կատարաշինեցաւ լրումն եկեղեցւոյ բաղմայեղանակ նախագուշակ մարգարէիցն քարոզութեամբք։

Այսօր ցնծան բերկրական կացրդիւք և գերազանակ [2]) պարախնդութեամբ երկնայինք և երկրայինք, այսինքն դասք հրեշտակաց և

---

[1]) Յօրինակի Մխիթարեանց՝ (որոյ հատուածք սփռեալ կան 'ի նոր բառգիրս Հայկազնեան լեզուի տպ. 'ի Վենետիկ յամին 1836 և 1837), ,,Մաքրաղտեալ,,։

[2]) Յօրին. Մխիթ. ,,Գերազանակ,,։

կաճառք մարդկան առ միմեանս արտաբերելով՝ գալստեամբ Որդւոյն Աստուծոյ։

Այսօր եհաս մեզ ժամանակ ուրախութեան, և խումբք սրբոցն անաղօտ ջահագործութեամբք գունակս գունակս պայծառացուցանեն զպատիւ մեծի աւուրս վայելչութեան՝ գալստեամբ Որդւոյն Աստուծոյ։

Այսօր վերահայեաց տեսակ՝ զուարթածաղիկ երփնաղանագեղ դարուն՝ սաղարթաճեմփթիթ բուսով վայելչացեալ՝ գալստեամբ Որդւոյն Աստուծոյ։

Այսօր առընկալաք զցօղ Աստուածգիտութեան յանկիւնս շտեմարանաց սրտից, զի քաղցրութիւն տատրակաց ձայնի լսելի եղև յերկրի մերում՝ գալստեամբ Որդւոյն Աստուծոյ։

Այսօր ամպք Աստուածայինք, և անձրևք [1]) հոգեզուարճք վերաբերեալ բուսով ստորացօղեն 'ի մարդիկ՝ գալստեամբ Որդւոյն Աստուծոյ։

Այսօր հոսանք հոգեխաղացք, և վտակք առատաբուղխք միշտ խողմեան՝ տրամուռոգանեն զբուրաստանեալ աւետարանատունկ մանկունս եկեղեցւոյ՝ գալստեամբ Որդւոյն Աստուծոյ։

Այսօր արարածք ամենայն լուսով փայլագունեալք ճառագայթանան՝ գալստեամբ Որդւոյն Աստուծոյ։

Այսօր երկիրս երկինք եղև, վասն զի տեսանի Աստուած եկեալ յաշխարհ։

Այսօր հողաստեղծեալ զարմ՝ ադամածնութեանս՝ երկնաքաղաքացի անուանակոչութեամբ գրեցաւ 'ի դպրութեան կենաց՝ գալըստեամբ Որդւոյն Աստուծոյ։

Այսօր նորափետուր հրաշիւք գեղեցկաղարդեալք 'ի հնագործութենէն՝ գալստեամբ Որդւոյն Աստուծոյ։

Այսօր դառնացեալ աղբիւրք և լեռք ջրակուտից՝ 'ի քաղցրութեան ճաշակս տրամադրին՝ գալստեամբ Որդւոյն Աստուծոյ։

Այսօր և վտակք աղբերաց [2]) առատաբերեն 'ի խաղս և 'ի մարգագետինս ծաղկոցաց՝ գալստեամբ Որդւոյն Աստուծոյ։

Այսօր ծով համատարած՝ տարաբերութեան նուագարանօք սահանագոչ [3]) վերաձայթեցին խաղաղաշարժ գեղաճեմելով [4]) գալըստեամբ Որդւոյն Աստուծոյ։

Այսօր բաղմահոլով գետոց յորձանասոյղ պտոյտք անարգել դանգրեօք գեղածփեալք՝ գալստեամբ Որդւոյն Աստուծոյ։

---

[1]) Յօրին. Մխիթ. ,,ցօղք''։
[2]) Յօրին. Մխիթ. ,,յաղբերաց''։
[3]) Յօրին. Մխիթ. ,,սահմանափոչ''։
[4]) Յօրին. Մխիթ. ,,գեղաճեմեալ''։

Այսօր և ջրակոյտ առլուղակաց ջրկաղասակարդութիւն եռաբերկրեցին վերածնութեամբ՝ դալստեամբ Որդւոյն Աստուծոյ։

Այսօր և վերին օդք շահեկանաբար սիռեալ [1]) տարածին 'ի պէտս մարդկան՝ դալստեամբ Որդւոյն Աստուծոյ։

Այսօր և վերագագաթնակատարահերձ [2]) կոհակք լերանց վարսագեղեալ պճնազարդեցին՝ դալստեամբ Որդւոյն Աստուծոյ։

Այսօր երկնահոլովակառաչու [3]) տարերք՝ երկուց լուսաւորաց ջահք՝ պայծառ զամբարօք փայլածին՝ դալստեամբ Որդւոյն Աստուծոյ։

Այսօր ստորափայլեաց արեգակն արդարութեան, որոյ բժշկութիւն իւր 'ի թևս է։

Այսօր փարատեցաւ խաւար սատանայական առագաստին, և վերայայտնեալ տեսաք զլոյսն ճշմարտութեան. վասն զի Քրիստոս եկն յաշխարհ։

Այսօր անեղն եղանի, և անտեսն տեսանի իւրով մարդեղութեամբն։

Այսօր անվայրափակն և անբովանդակն բովանդակի, և անժամանակն սկզբնաւորի իւրով մարդասիրութեամբն։

Այսօր գայ կամաւորութեամբ յաշխարհ որ յաշխարհի էր, և 'ի սմանէ ոչ երբէք մեկնեցաւ։

Այսօր խոնարհեցուցանէ զլերինս 'ի ծառայութիւն, և հնազանդեալ հային հրամանաց Նորա։

Այսօր սնոտի արձանապաշտութիւնն ունայնանայր և 'ի բաց բառնիւր, և Աստուածպաշտութիւն արդահատեալ յաշխարհ ծագեաց՝ դալստեամբ Որդւոյն Աստուծոյ։

Այսօր 'ի հին տխրութեանցն զերծեալք, և որպէս նոր Խսրայէղ՝ եղեալք ապրեալք՝ դալստեամբ Որդւոյն Աստուծոյ։

Այսօր յղփացեալ շտեմարանք Հրէիցն Աստուածգիտութեան սպառեցան, և կարօտացեալ շտեմարանք հեթանոսաց առաւել զեղմամբ առլցան շնորհատուր պարգևօք Հոգւոյն սրբոյ։

Այսօր վերաբունեալ ամբարտաւանք յերկիր ստորանկեալ կոծանեցան, և աղքատացեալ տնանկք օրհնաբանութեամբ մինչև յերկինս բարձրացան։

Այսօր զերծաք 'ի դառնապահարկ [4]) աղխասագործութենէն Փարաւոնի, և ընկալաք զգիր նամակի ազատութեան՝ դալստեամբն Քրիստոսի յաշխարհ։

---

[1]) Յօրին. Մխիթ. ,,սփռեալ,,։
[2]) Յօրին. Մխիթ. ,,վերագագաթնակատարքերդ,,։
[3]) Յօրին. Մխիթ. ,,երկնահոլովակառաչ,,։
[4]) Յօրին. Մխիթ. ,,'ի դառնապարհակ,,։

Այսօր բացաջնջեցաւ ձեռագիր հակառակամարտին՝ գալստեամբն Քրիստոսի յաշխարհս։

Այսօր ծովաքատակ մեղք աշխարհի արտասահմանահալած փախչի, և Յորդանան ընդ կրունկն դառնայ, և ոգիք մարդկան լուսաւորին, և Յիսուս մկրտի, զի Աստուած տեսանի եկեալ յաշխարհ։

Այսօր Յովհաննէս որդի պառաւամօրն՝ Զաքարեան զարմ՝ մեծ քահանայական շառաւեղ Մակաբայեցւոցն՝ երկրորդ տոհմ Ղևեան, գոլով 'ի հոսանապտոյտ պարագայ ջուրսն Յորդանանու՝ մկրտէ զՔրիստոս, և լինի վկայ համապատիւ սուրբ Երրորդութեանն՝ տեսանելով զէջքն աղաւնակերպ սուրբ Հոգւոյն 'ի վերայ գլխոյն Քրիստոսի, և զՀայրական զձայնն լուեալ, թէ ,,Դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ''։

Այսօր անխոնարհն զգլուխն իւրում ծառային խոնարհեցուցանէ, զի զմեզ բարձրացուսցէ իւրով գալստեամբն։

Այսօր անպարագրելին ձեռնադրի յիւրում՝ մարդեղութեանն, զի զմեզ տեսողս արասցէ իւրոյ Աստուածութեանն։

Այսօր յայտնի Աստուածութիւնն, [1]) և ամենեքեան լուսով [2]) ճառագայթատեսին։

Այսօր Աստուածաշունչ քնարն Յովհաննէս՝ 'ի գլուխ ահաւոր և հրակեզ մերձենայր, և լուանալով մաքրին ջուրքն Յորդանանու յապականութեան եռացմանցն։

Այսօր ջուրք 'ի սրբութիւն աշխարհի վերաբերին, և մաքրաղտեալ սրբին ամենայն բնութիւնք ջուրց՝ յերևել Աստուծոյ մերոյ։

Այսօր ժառանգեցաք զերկնից արքայութիւնն, զի արքայութեան նորա վախճան ոչ դոյ։

Այսօր բղխեցին լերինք զքաղցրութիւն, և բլուրք զկաթն 'ի դալարուոջ։

Դարձեալ բանալով անդրէն [3]) զխանութս ալեաց [4]) վերստին գեղգեղացուսցուք [5]) զբանայեղոց նուագարանս [6]) գովասանութեան մերոյ, և 'ի նոյն աղբերէ հոգևոր հանճարոյ ընթացուք ճաշակել զվտակս հոգևորս, և նովաւ աճեցուցանել զտունկս ներբողենիս առ սուրբ և Աստուածածին կոյսն Մարիամ, և շահատակարար ծաղկեցու-

---

[1]) Յօրին. Մխիթ. ,,Առդաւոյ''։
[2]) Յօրին. Մխիթ. չՓք ,,լուսով''։
[3]) Յօրին. Մխիթ. ,,անդրէն''։
[4]) Գուցէ ,,ալեաց''։
[5]) Յօրին. Մխիթ ,,գեղեցկացուսցուք''։
[6]) Յօրին. Մխիթ. ,,նուագարանաց''։

ցանել զբանիչոյց դրուագս կորովութեանս մերոյ արդասեաց [1]) ձայնակից լինելով հրեշտակին ահաւոր առասանութեանց։

Ուրախացիր խնդամտաբար սրտիւ՝ տիրուհի կոյս և Աստուածածին Մարիամ, դուստր մարգարէութեան շնորհի և մայր Տեառն, որ Աստուած վայելչութեան ծնար զարեդակն արդարութեան, և քեզ տեսաք և ծանեաք զՇմարտահոս լոյսն Քրիստոս, որ լուսաւորէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ։

Ուրախացիր բերկրական սրտիւ՝ օրհնեալդ 'ի կանայս, պայծառաղարդ արևելք որ 'ի քէն փայլածագեաց լուսաւորութիւն Աստուածաշունչ երեսաց Քրիստոսի, և մակաղարթոյց զսիրտս մեր առ 'ի քննել զնորագիտութիւն [2]) ուղղափառ հաւատոյ։

Ուրախացիր հրճուողալից սրտիւ՝ ամենօրհնեա՛լ ծնող և աղախին Տեառն, որ արժանաւորեցար գոլ ինքնատես և սպասաւոր Բանին Աստուծոյ Հօր։

Ուրախացիր բերկրական ձայնիւ՝ կոյս բարեպաշտ՝ և անարատ ծնունդ նախաստեղծին, և ընդհանուր ստեղծողին ծնող. քանզի 'ի քեզ հաճեցաւ բնակիլ անպարիմանալին Աստուած։

Ուրախացիր մեծ խնդութեամբ՝ Մարիամ սրբուհի՝ օրհնեալդ 'ի կանայս, բարձրատեսակ և պայծառ երկին, աթոռ փառաց բարձրելոյ Ճշմարտին Աստուծոյ։

Ուրախացիր խնդամտաբար սրտիւ՝ մայր լուսոյ և բերկրանաց, անդաստան ծաղկանց՝ ցցուաղարդ [3]) գեղգեղեալ բազմագունակ երանգօք և յարաղուարձ առատացողովք, հովիտ շուշանաբեր և մանուշակ անուշահոտ յաւէտ սրբասնեալ վարուք, որ 'ի մեզ հրաշագործեցեր զանուշահոտութեան գեղեցկազան Բանին Աստուծոյ զտնտեսութիւն։

Ուրախացիր վայելչաբար սրտիւ՝ անհարանացեա՛լ տիրուհի և Աստուածածին, դրախտ փափկանոյց զանազանութիւն բողբոջօք [4]). զանազան գեղաւորութեամբ՝ առաքելովք և մարգարէիւք և վարդապետօք և ամենայազգի մարտիրոսօք և ամենայն սրբովք։

Ուրախացիր և բերկրասիրեա՛ մայր լուսոյ և բերկրանաց, այգի տաշտաւոր և ողկուզաբեր՝ գիներուղխ և սաղարթաճեմ բարունակեալ, որ 'ի քէն մակաշառաւեղեաց ընձիւղեալ Հայրատունկ որթն Ճշմարիտ Քրիստոս, և ներրաժանեալ երկուս մասունս գնդակաց՝

---

[1]) Յօրին. Մխիթ. «զբանիչոյց խորվ-թիւն դերոյ արքասխ»։
[2]) Յօրին. Մխիթ. «տա- գնել զնորագիտութիւն»։
[3]) Յօրին. Մխիթ. «ցցուաղարդ»։
[4]) Յօրին. Մխիթ. «բողբոջնոք»։

հրէակաձառ ատենին շարաւանդան, և մնուր սարապետացն աւարումն բաժանման շարադասեցաւ։

Իսկ մեզ դաւանողացս զքեզ՝ ամենասուրբ Աստուածածին՝ կոյս անարատուհի, և արդարակորով երկրպագողացս որդւոյ քո Քրիստոսի և Աստուծոյ մերոյ, չորեքտասանեան առատաբուղխ վարդապետութեան ճաշակքնուագաւորեալ պաշտին մինչև 'ի ժամանակս յաւիտեանս։

Դարձեալ, ուրախացիր արժանապատիւ սիրով՝ Մարիամ կոյս՝ ծնող և աղախին բոլորեցունց Փրկչին և Աստուծոյ, հնձան Աստուածահրաշ և հոգենկար, որ յարաբղխեցեր զհոսանս վտակաց անուշահամն և առատաբուղխս հոգեծաւալ գինւոյն Քրիստոսի 'ի մեջ հընձանաշէն եկեղեցւոյ. և մատռուակեալ 'ի վեցեակ դարյեղափոխութեանս մինչև յապառնիս եօթնեկի աւուր մտին՝ հոգեպարար զմայլեցուցանեն զմանկունս առագաստի վեսայայեալ Բանին Աստուծոյ։ Այլ և 'ի հանդերձեալսն վերաթուեն՝ շտեմարանելով զբարեացն պարգևաբաշխութեան ձիրս։

Ուրախ լեր Մարիամ՝ շնորհազարդեալ տաճար, հարսն երկնային և լուսաւոր առագաստ, արքունական գործարան միաւորութեան Բանին ընութեան։

Ուրախացիր անհարսնացեալ Մարիամ՝ մայր Տեառն, բաժակ հոգևոր՝ և Աստուծային շնորհացն տուող 'ի ձեռն աւետարանագիր արանցն Քրիստոսի՝ որ արբուցին զտիեզերս։

Դարձեալ, բազմերանաւէտ բարբառով ուրախացիր Մարիամ սրբուհի՝ օրհնեալդ 'ի կանայս, ուղղան հոգևոր՝ և հոգիանիւթ գործի լայնասփիւռ՝ առաքելագունդ ձկնորսացն, որք զանազանահաւաք զարմիւք որսացին զբոլորահովիտ տիեզերս 'ի կեանսն յաւիտենից և յանծերանալի համարնակութիւնն։

Ուրախացիր բարեբաստութեամբ՝ անհարսնացեալ Մարիամ, անարատ մաքուր աղաւնի Քրիստոսի, շնորհատու Հոգւոյն ընդունարան, որ միշտ բարեձեւաղարդեալ քեզ ուղղափառին եկեղեցիք հեթանոսաց։

Դարձեալ, խնդալից ուրախացիր Մարիամ՝ պտուղ արքայութեանն երկնից. յաղագս որոյ 'ի քո պատուական մայրութեանդ եկեղեցիք նորափետուր զարդարեալ հրաշիւք՝ ծայրարձակ ոստովք առաքինութեան պայծառ պտղաբերին հաւատովք [1]) յընծայումն որդւոյ քո և Աստուծոյ մերոյ։

Ուրախացիր Աստուածածին Մարիամ՝ պարկեշտասէր և սրբասէր վարուք, որ ոչ եթէ մերօրէն ինչ, այլ՝ անճառաբար յղացար և

---

[1]) Յօրին. Մխեթ. «պայծառաբերին պտղովք»։

ծնար զԷմմանուէլն՝ ըստ Եսայեայ տեսողութեանն. վասն զի ճշմարտապէս մանուկ ծնաւ մեզ ըստ Հոգւոյն նկարակերտութեանն, և որդի Բարձրելոյն՝ ըստ հրեշտակապետին աւետեացն. զի նախ քան զանուանակոչութիւն հօր և մօր՝ առցէ զզօրութիւն Դամասկոսի և զաւար Սամարեայ, և ոչ ևս երկիցուք 'ի ծխալից երկուց թագաւորաց խանձողաց 'ի մեզ տիրելոյ, այսինքն՝ մահու և դժոխոց. վասն զի թագաւոր մեծ 'ի վերայ ամենայն երկրի Աստուած է։

Դարձեալ, ուրախացիր՝ անփորձ 'ի մերօրէն հարսանեաց՝ հարսն երկնային և անհարսնացեալ Մարիամ, որ հրաշաղանապէս Աստուած վայելչութեան ծնար զԷմմանուէլն, և զգեղուղէշ [1]) արմատն պտղաբերեցեր, որպէս 'ի ծարաւուտ երկրի, և անկէզ պահեցար շնորհօք սուրբ Հոգւոյն 'ի մեօքակերպ 'ի սաղմանկար զուգամասնութենէ, այլ և 'ի հեթանոսս շառաւեղագործեաց, համաբոլոր տարածասփիւռ ներծաւալեցաւ ուղէշ արձակ քաղցրաբեղուն՝ արմատն այնորիկ՝ որ 'ի քէն յայտնեցաւ աշխարհի, որք պասքածարաւիք էին յամենայն սրտէ Աստուածգիտութեան։

Ուրախացիր լուսայեղց դիմակաւ բերկրեալ և զուարթալից սրրտիւ՝ օրհնեալդ 'ի կանայս, մայր կենաց և փրկութեան ազգի մարդկան, գեղմն լուսակիզն և անթմանալի՝ մարգարէագործ պիտառութեամբ բացայայտեալ, որ զանարանց հարսին ունիս զձև անախտ և անամբոխ և պարկեշտասէր ամուսնութեամբն։ Վասն որոյ Դաւիթ 'ի մարգարէս 'ի նոյն տիպ կուսածին հարսնութեանդ՝ յորդորահնար քնար նուագարանաւն համակի զէջս Հոգւոյն 'ի քեզ տպաւորեալ՝ ասէր ,,Ելջցէ որպէս զանձրև 'ի վերայ գեղման, որպէս զցօղ զի ցօղէ յերկիր,,։ Ծագեսցի յաւուրս մարմնաւորութեան նորա արդարութիւն և բազմայեղանակ խաղաղութիւն, մինչև ցկատարեալ մաշումն լուսնին, այսինքն՝ ցնուաղումն հեթանոսաց,,. զի որ հնանայն և ծերանայ՝ մերձ է յապականութիւն՝ ըստ Պաւղոսի, վասն զի Քրիստոսիւ խափանելոց էր։

Դարձեալ եռանդնասէր և յորդոր փութով, և յորդորապահանջ հարկապահանջութեանս զբազմայեղանակաբուն շառաւեղն դովասանութեան Հոգւոյն սրբոյ վարսագեղութեանց՝ խոյրապսակաղարդ փաղփիւք ընծայաբերեմք քեզ 'ի մերմէ նուաստաջան արուեստից ոմ տիրուհի՝ սրբասնեալ և վերահոչակեալ քոյր մեր, զուստր մարգարէութեանց, ակն սուտակ և դահանակ լուսաջահայեղց ընտրաբանեալ 'ի մէջ դստերաց Սիոնի։ Վասն զի առ 'ի բազմաց անհաւանութենէ ընդ քեզ հաճեցաւ Հայրն բոլորից, և առաքեաց զիւր սիրելի միա-

---

[1]) Ցօրին. Մեթեթ. ,,գէրգէրէ,,։

ծինն 'ի ծառայական մարմին տաղաւարել՝ Հոգւոյն սրբոյ 'ի քեզ ներգործեալ։

Ուրախացիր պարկեշտուհի Մարիամ՝ դուստր Աբրահամեան աւետեացն, բողբոջ Յեսահակայ, որ անապական ծնար և սքանչելապէս զԱստուածոյ զօրութիւնն և զիմաստութիւնն և զանդրանիկն արարածոց և զարարիչն համաբոլոր բնութեանս, որ այժմ դարձաւ 'ի տրղայութիւն արարիչն հրեշտակաց, և դարձոյց զտիեզերս 'ի մանկութիւն կենաց։

Դարձեալ Աստուածավայելչաբար սրտիւ և բարեղուարճարար[1]) ուրախութեամբ ուրախացիր Մարիամ՝ անհարսնացեալ և անզբաղսէր կոյս, սխրագործ երանութեան [2]) հարսն, որ ծննդեամբ զԵդեմական գետոյն վտակս առատագոյն բերես 'ի քեզ. և խոխոմեալ արբուցանես զյոգնալանագունակ տունկս դրախտին փափկութեան, որ այժմ իմանալի է մեր դիտաւորութեանս զեկեղեցւոյ բուրաստանեալ մանկունս վերաստեղնեալ հաւատով սնեալք՝ անարգելս առ երկնոսանահոլովաշարժ վարդապետութիւնս աւետարանին Քրիստոսի։

Ուրախացիր բոլորամիտ սրտիւ՝ մայր լուսոյ Աստուածածին Մարիամ, սեղան Աստուածախառն. զի զորօրինակ հրամայեցաւ Մովսէսի անտաշագործ մարգկային հնարաւորութեանց՝ վիմակառոյց արձան ուղղեալ՝ ընդունակ ընծայեալ Աստուծոյ, այսպէս և պարկեշտասէր անձն քո անկիր և անփորձ պահեցաւ 'ի մերօրէն հարսանեաց. վասն զի շնորհօք Հոգւոյն սրբոյ պարսպեալ եղեր՝ ընդունող սեղան երկնային հացին իջելոյ յերկնից, որ կեանս տայ աշխարհի։

Ուրախացիր Մարիամ խնդամտաբար սրտիւ՝ հլու և միամիտ աղաւնի, օրհնեալդ 'ի կանայս, մայր եղամիտ՝ Քրիստոսի, դուռն փակեալ՝ ըստ Եզեկիէլի՝ արևելածագ ելից և մտից Տեառն Աստուծոյ Իսրայելի, զոր ո՛չ հրամայեցաւ նմին ուրեք նման առնել 'ի մարդկանէ. զի անհասական և անճառ խորհուրդք բերիւր երկնապայծառ[3]) կուսութեանդ քո դուռն։

Դարձեալ, ուրախացիր վերստին՝ երկնաբեր աւետեաց բերկրեալդ՝ վայելուչ սրտիւ, մայր Քրիստոսի և Աստուծոյ մերոյ, զի անփակն և անբովանդակն երկնի և երկրի մեծագործութեամբ՝ ինքնակամ յօժարութեամբ սրտիւ բարեհաճեցաւ կալ ինամեալ ժամանակաւ գեղաւարդեալ 'ի քում հոգենկար արգանդիդ, մինչև ծնար զանդրանիկն արարածոց և զարարիչ, որոյ կոչեցաւ անուն Յիսուս՝ ըստ հրեշտակին առասանութեան։

---

[1]) Ցօրին. Մխիթ. ,,բարեբարոյ''։
[2]) Ցօրին. Մխիթ. ,,երանաբեր''։
[3]) Ցօրին. Մխիթ. ,,երկնապայծառ ամենասուրբ''։

Ուրախացիր Մարիամ օրհնեալդ 'ի կանայս՝ երանելի տեսողաց՝ և տարփելի անտեսից, ջրհոր հոգևորաբուղխ, որ լի [1]) դոս Աստուածահանձար իմաստաբեր անձկութեամբ կենդանի անծարաւ ջրոյն, յոր Սամարուհւոյն տենչասիրեալ սակս Նեղավտակ պասքածարաւ երթևեկութեանն։ Որով և մեծ մարգարէն Դաւիթ՝ թագաւորն Իսրայելի՝ Հոգւոյն եռանդամբ ցանկայր. ,,Ո՞ տայր ինձ ըմպել 'ի ջրոյն Բեդղէէմի որ առ դրանն,,։ Եւ յիրաւի առ դրանն դիտաւորութիւն մարգարէին. քանզի մերձ առ դուրս կայր փառապարգև դալուստն Քրիստոսի։ Եւ երից զօրավարացն կառամարտից վանեալ զԴեգուր այլազգեացն՝ բերեալ զջուրն ըղձալի առ արքայ, և ոչ կամեցաւ ըմպել. քանզի ոչ էր հասեալ 'ի նորա ծերացեալ ժամանակն ծնանել 'ի քէն Քրիստոսի։ Թէպէտ և համաղոյդ անձն և մարմին մարգարէին, և հոգի ըստ Աստուածատուր իմաստութեանն և գիտութեանն, և անցեալ ընդ երկրաբարձ ասպարէզս դիւագունդ փաղանգաց, որ և թըշնամիս առնեն զմարդիկ՝ Աստուծոյ։

Ուրախացիր Մարիամ՝ տիեզերաբարձ տուփ ոսկի՝ զարդարեալ անուշահոտ խնկովք, և տաշտ մաքրափայլ եւղեփեցական բուրմամբ. քանզի որպէս 'ի գունաղանագեղ վարդից և շուշանաց և 'ի հովտածիծաղասաղարթ ծիրանաթոյր մանուշակացն վարդագեղեալ ունիս հիւսակ, անհարսնացեալ Մարիամ՝, պարկեշտասէր վարուք առաքինական սրբութեամբք։ Վասն որոյ և առ 'ի մէջ ընկալցիս զբանիցս ընծայումն, որ ոչ երբէք կարօտաբերիս նուաստութեանս մերոյ դրուատեաց. որոյ գովութեան չափ՝ ոչ առ 'ի մարդկանէ, այլ առ 'ի ՅԱստուծոյ ընծայի քեզ, ով տիրուհի կոյս և Աստուածածին Մարիամ։

Ընդ՝ այսպիսի շահատակող և հոգևոր կուսական տօնախմբութեանս, ով սիրելիք, բազմայորդոր փութով հաւանեցարուք 'ի շնորհավաճառութիւն այսր աւուր։

Երիտասարդք և կուսանք, ծերք և տղայք, գեղեցկապէս փութով փոխեցէք զմարմնաւոր թմրկահարութիւնս ընդ հոգևորսն. վասն զի այս իսկ է ժամանակ տուրևառիկ՝ անարգել անխափան ուղևորել յարքայութիւնն երկնից՝ 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն։

Ծանօթ. Կան ինչ ինչ 'ի ճառիս առանձին մտադրութեան արժանիք, յորոց մի և այն է՝ զի նախ առաջին 'ի ամս հանդիպելիսն բառից բարդելոյ 'ի քառեակ նշանական ձայնից, որպիսի են՝ հրալուսաճանաչողեղնութիւն, վերոգոպանաւորութիւն, երկնաբնակ, երկնաբանաչողութիւն։ Առաւելագոյնքն խօսել զայսմանէ՝ դերականաց է անկ։

Մ. Մ.

---

[1]) Յորին. Մեթիթ. ,,գէ,,։

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

—

Ի ԲԱՆԻՑ ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ

Ի ԳՐՈՑ ԲԱՐԲԱՌ

ՀԱՄԱՌՕՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՊԱՏԿԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ի ՍԿԶԲԱՆԷ ՑԱՒՈՒՐՍ ՄԵՐ

Եթէ 'ի վէպս առաջնոց զտեղի ունել 'ի ճահ դատեցան յիշատակարանք Հայաստան աշխարհի, ճահագոյն ևս թուեսցի արդեօք և զկնեացս միտ դնել սակաւուք բազմադէմ յեղափոխութեանցն՝ որովք նորայն կերպարանափոխ եղև վիճակ 'ի սկզբանէ անտի և այսր։

Հայկ, նախահայր ազգիս Հայոց (յորոյ անուն և աշխարհն առ զկոչումս Հայաստան), յետ կործանելոյ զդռոզացեալն Բէլ 'ի մարտի, ելթող սերնդոց իւրոց իշխանութիւն Միապետական՝ ազատ, և անկախ զայլոց։ Արամ՝ եօթներորդ 'ի նմանէ՝ անուանի լեալ յաղթական բազկաւն, հնչեցոյց մինչև 'ի հեռաւոր ծագս զիւր զմեծ համբաւ։ Ուստի և յանուն նորա սովորեցին այլք զաշխարհն զայն Արմենիա կոչել, և ազգին անուն կարդալ Արմենան կամ Արմէն։

Այս չէր շատ. բարձրագունի՛ ևս մնայր բաղդի՝ Հայաստան, և եհաս այնմ՝ առ Պարոյրաւ՝ տեսեալ զնա թագազարդեալ՝ յետ կործանման Նինուէի յաւուրս Սարդանապաղ'ղ'այ։ Այլ ի՞նչ ինչ ընդ արեգակամբ զերծ 'ի ժամանակին յեղափոխութեանց։

Ընդին դարք, և վիճակ թագաւորութեան Հայոց բազմապիսի ետես փոփոխմունս՝ մերթ առաւելեալ 'ի զօրութիւն, և մերթ վատթարեալ։ Որք յԱրշակունեացն կացին թագաւորք, էր զի ահագինս գոռային ընդդէմ Պարթևական և Հռովմէական պետութեանց, և էր զի հարկս նոցուն հարկանէին։ Թագրատունիքն անուանեալ թագաւորք, այլև Ռուբենեանք, թէ և բազում ճգնեցան 'ի հաստի պահել զնախնականն գաւազան, այլ հուսկ՝ ո՛չ զօրելով զդէմ ունել ուղղեալ արշաւանաց շուրջ յամենայն թշնամեաց 'ի վերայ հասելոց, և յաւէտ ևս յառանին յուղմունս փեռեկեալ, ստիպեցան թողուլ զՀայաստան՝ զամենալին և զամենաբերն աշխարհ՝ 'ի ձեռս աւարա-

ռուաց։ Եւ զ'ինչ յայնմ հետէ առնել էր քաջին Արամայ սերնդոց, եթէ ոչ լրիկ մնջիկ անտէրունչ կալ նստել յաւերակսն Հայրենեաց, և անմխիթար զթագին ողբալ զկորուստ։ Ահա սկիզբն թշուառութեան Հայաստանի յանբարեբաղդն դարու։

Խաղաղասէր Հայք ոչ ևս կարացեալ ժուժել անգութ հարուածոց՝ գերութեանց՝ և բռնաւորութեանց ազանց բարբարոսաց, Պարսիցն ասեմ Տուղրիլեանց, Արաբացւոց, Թաթարաց և այլոց, դէմ եդին ինքնակամ ընդ ժամանակս ժամանակս չուել գնալ անցանել 'ի սահմանս օտար տերութեանց, այս է՝ Յիտալիա, 'ի Հնդիկս, 'ի Լեհս, 'ի Տաճկաստան և այլուր. յորս թէև տուան նոցա երբէք երբէք զիւրութիւնք առ 'ի կեալ խաղաղապէս և վաճառաշահութեանց պարապել, այլ ոչ և կարևորն օժանդակութիւն առ լեռլի բարորութիւն կենաց և առ ստացումն լուսաւորող գիտութեանց։ Ուստիա միայն գտաւ, որ առ մեծաւն Պետրոսիւ և յաւէտ ևս առ յաջորդաց նորա առ Կատարինեաւ Երկրորդիւ, և առ Պաւղոսիւ Առաջնով, սիրողաբար դիրկս տարածեաց ընդունել մայրօրինակ զվտարանդեալ որդիսն Հայաստանի՝ վստահ ամենայնիւ լեալ 'ի նոցայն յանյողդողդ հաւատարմութիւն. և փոխարէն վաստակոց նոցուն 'ի բազում դէպս՝ ոչ զլացաւ հրովարտակօք առանձնաշնորհութիւնս պարգևել նոցա ազգի ազգիս։

Հայկաղունքս այսոքիկ յետ ժամանակաց բարեբաղդագոյն ևս գտան՝ իբրու երկրորդ ունելով իւրեանց նախահայր զհոյակապ գերդաստանն Լազարեանց՝ ալնուականօք ճոխացեալ առաքինութեամբք։ Մի յարժանագով և 'ի պանծալի մեծագործութեանց այսր գերդաստանի յօգուտ Հայոց և Ռուսաց, է՝ հռչակաւորն ճեմարան Արևելեան Լեզուաց որ 'ի Մոսքուա, յորում երկաքանչիւրոց ազգացս մանկունք վարժեցան և վարժին ցարդ 'ի պէս պէս գիտութիւնս շահաւետագոյնս՝ կանոնաւոր հրահանգօք։

Նշանաւոր դար Նորոգութեան Հայաստանի սկիզբն էառ 'ի բարենշան աւուրս Կայսերութեան Նիկողայոսի Առաջնոյ, յորժամ (յամին 1828) արիական և ազգասէր ջանիւք Առաքելաշնորհ Արք Եպիսկոպոսին Ներսիսի և քաջափայլ Գնդապետին՝ Ղազարու Լազարեանց՝ ոգիք իբրև քառասուն հազար գաղթեալք 'ի Պարսկաստանէ և 'ի Տաճկաստանէ՝ հիմնեցին բնակութիւնս 'ի Նորանուաճ դաւառսն Հայաստանի, ուր և կեանն խաղաղապէս՝ օրհնելով հանապազ զկեանս Մեծի Խնամակալի իւրեանց և Քրիստոսասիրի կայսեր՝ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ԵՐԿՐՈՐԴԻ։

ՄՍԵՐ ՄՍԵՐԵԱՆՑ

ՔԱՐՈԶ

ՅՕՐ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶԻ

Յորժամ Պտղոմէոս արքայ, հիմնողն հռչակաւոր մատենադարանին Աղեքսանդրիոյ, կամեցաւ ղՀին կտակարանն թարգմանել տալ Յերրայական լեզուէ 'ի Յոյն, ընտրեցան 'ի Հրէից եօթանասուն և երկու իմաստունք, որք քաջ գիտէին զլեզուն Եբրայեցւոց և զՅունաց։ Մի 'ի Հրէից անտի յիմաստնոց՝ էր Սիմէոնն, այր արդար և բարեպաշտ։ Սա 'ի թարգմանելն 'ի գիրսն Եսայեայ զբան մարգարէութեան նորա թէ ,,Ահա կոյս յղասցի՝ և ծնցի որդի,, (Է. 14) երկմտեցաւ, և յետ սակաւիկ մի մտախորհ լինելոյ՝ էառ զղմեալսն, և կամէր քերել զտեղին զայն իբր անվաւեր. բայց յանկարծ երևեցաւ նմա հրեշտակ Տեառն, և կալեալ զձեռանէ նորա՝ ասաց ,,Հաւատա՛ գրելոյդ. քոյովք իսկ աչօք տեսցես դու զկատարումն այդր անհասանելի մարգարէութեան,,։ 'Ի բաց եկաց Սիմէոնն 'ի գիտաւորութենէն զոր ունէր, և յօրէ անտի սպասէր կատարման բանից մարգարէին Եսայեայ, որում ապա և եհաս։

Օրէնք էր 'ի հին կտակարանի՝ ծնողաց որք ծնանէին զարու զաւակ՝ չմտանել 'ի տուն Աստուծոյ ցլրումն աւուրց քառասնից յետ ծննդեան։ Օրէնքս այս պահպանի և առ մեզ։ 'Ի քառասներորդում աւուր պարտ էին նոքա գնալ 'ի տաճարն վասն ընդունելոյ զքաւչական մաղթանս 'ի քահանայէ, և վասն մատուցանելոյ 'ի պատարագ զոյգս տատրակաց կամ երկուս ձագս աղաւնեաց կամ գառինս։

— Ծնաւ Քրիստոս, եհաս օրն քառասներորդ յետ ծննդեան։ Եւ ահա Մարիամ և Յովսէփ կատարելով զօրէնսն՝ առնուն երկուս տատրակս, և երթան հանդերձ մանկամբն Յիսուսիւ 'ի տաճարն. և 'ի մտանել նոցա անդր՝ գայ ազդեցութեամբն Աստուծոյ և արդարն Սիմէոնն, տեսանէ զմանուկն Յիսուս, առնու 'ի գիրկս, և տեսեալ 'ի նմա զմխիթարութիւնն Իսրայելի՝ աղաղակէ. ,,Արդ՝ արձակես զծառայս քո, Տէր, ըստ բանի քում 'ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց,, (Ղուկ. Բ. 29—32)։ Եւ այսպէս կատարեցաւ բանն Եսայեայ մարգարէի, և լրումն էառ ակնկալութիւնն Սիմէոնի։ Ընդ առաջ ել նա 'ի տաճարի՝ Տեառն՝ ծնեցելումն յամենամնքուր 'ի կուսէն։ Եւ այսր աղագաւ տօնն այն կոչի ,,Տեառնընդառաջ,,։

Քրիստոնեայք, վարդապետութիւն հաւատոյս մերոյ պարունակէ յինքեան բազում ինչ խորհրդաւոր և անհաս 'ի մերոց մտաց։ 'Ի

բաց դէք զամենայն երկմտութիւն. այնպէս հաւատացէք, որպէս ու սուցանէ հաւատն։ Անհասանելոյն հասու լինել անհնար է, և չէ իսկ հարկ հասու լինել։ Մի՛ սպասեսցուք սքանչելի երևման հրեշտակի, զի խելամուտ արասցէ զմեզ և լուծցէ զմեր տարակուսանս։ Ունիմք մեք դաստիարակ հաւատարիմ և մեկնիչ՝ զսուրբ եկեղեցի։ Նմա լուիցուք, նմա հաւատասցուք յամենայնի։

Արդարն Սիմէոնն յառաջ քան զմահ իւր ետես զկատարումն անհասանելի խորհրդոյս՝ ընդ որ երկմտեալն էր։ Յառաջ քան զմահ, ունկնդիրք, և մեր բացցին աչք, և դիտասցուք զայն՝ զոր այժմս ոչ կամիմք դիտել, և հաւաստի լիցի մեզ այն՝ ընդ որ այժմս երկմտիմք։ Յառաջ քան զգերեզման գոյ և այլ կեանք, կեանք յաւիտենական, զորմէ մեք այժմ սակաւ հոգամք։ Յառաջ քան զմահ ծանիցուք հաւաստեաւ՝ եթէ 'ի հանդերձեալ կեանս մնան մեղաւորաց տանջանք, տանջանք յաւիտենական, յորոց մեք այժմ սակաւ զանգիտեմք։ Յառաջ քան զմահ ծանիցուք իսկապէս՝ թէ գոյ Աստուած արդարադատ, որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց, յորմէ մեք այժմ սակաւ երկնչիմք. ծանիցուք յայնժամ՝ յայտնապէս և դիտասցուք զայն ամենայն՝ զոր ուսուցանէ մեզ սուրբ եկեղեցի, որում յոլով անգամ անլսող գտանիմք։

Դայց, աւա՜ղ, դուցէ թէ բացցին յայնժամ աչք մեր ոչ 'ի խնդութիւն։ Արդարն Սիմէոնն ետես յառաջ քան զմահ՝ զփրկութիւն. իսկ մեղաւորն տեսցէ յայնժամ զկորուստ իւր։ Սիրտ Սիմէոնի լցաւ մխիթարութեամբ, բայց սիրտ մեղաւորի լցցի յուսահատութեամբ։ Սիմէոնն յառաջ քան զմահն ասաց. ,,Երկնամ խաղաղութեամբ,,, այլ մեղաւորին մնայ ասել ,,Գնամ սարսափմամբ, ակնկալեալ տանջանաց դժոխայնոց,,։ Տո՛ւր մեզ, ո՛վ Տէր, տո՛ւր մեզ յառաջ քան զվախճան մեր ապաշխարել. մի՛ թողուր զմեզ մեռանել 'ի մեղս. առաքեա՛ մեզ զայնպիսի մահ, որով արդարն մեռաւ Սիմէոնն. բաց արդէն զաչս մեր, զի տեսցուք, և զարհուրեսցուք 'ի քումմէ յահաւոր դատաստանէ. Ամէն։

Թարգմանեաց 'ի Ռուս լեզուէ
ԲԱՐՍԵՂ ՏԷՐ ՍՏԵՓԱՆՆԱՆՑ,
որ էր աշակերտ Լազարեան Ճեմարանի։

'Ի 1 Նոյեմբերի
1857 ամի
'Ի Մոսքուա։

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Որ եսդ 'ի յերկինս՝
Հայր ամենաստեղծ,
Ընունդ՝ անտրխեղծ
Լիցի յերկրածին։
Քո արքայութիւն
Հասցէ փութապէս,
Օրի մի՛ չարն 'ի մեզ
Թշնամոյն համբուն։
Եղիցին յաւէտ՝
Որպէս յերկնից կայս,
Նոյն և 'ի ստորեայս,
Կամք քո փրրկաւէտ։
Հաց զօրաստօրէն,
Դու Տէր, յայսմ աւուր՝
Հայցեմք՝ և մեզ տուր
Խընամողօրէն։
Թող ըզմեր պարտիս,
Որպէս մեք մեզէն
Թողուցեալ ոյց մեզ են
Պարտապան յաստիս։
Մի՛ ըզմեզ փորձոյ
Կենցաղոյս մատներ,
Այլ զանձինս մեր
'Ի չարեաց փրրծո։
Օրի է խսկ՝ է քո,
Քո արքայութիւն,
Քո և զօրութիւն,
Քո փառք մշտագոյ։

Մ. Մ.

ԻՄԱՍՏՔ

ՃԸ ԵՐՈՐԴ ՍԱՂՄՈՍԻ

Օրի՛ լըռես, Ա՛ստուած, Աստուա՛ծ վրէժխընդիր,
Որ կաս 'ի բարձունս, հայիս և յերկիր։
Թըշնամին ահա՛ 'ի սիրտ չարակիր
Զար զինէն խորհի, լուտայ 'ի նանիր։
Տէս, զիա՛րդ փոխան իմ սիրոյն առ նա՝
Նախատինս յաւէտ դընէ յիմ վերայ։
Ես յաղօթս կանխեմ. նա բարուք դըժնեայ
Զարեաց 'ի չարիս դիմէ, և խընդայ։
Ո՛ռիմէ՞ ժուժաս որ հրաշագործ ես Հայր՝
Երբ անըզգամն ինձ լինի ոտընհար։
Ո՛ւրա՝ զի 'ի դուրս անկցի նա 'ի վայր.
Ընդ աչմէ նորա կացցէ՛ թեւլիար։
Կարճեսցին յերկրի ժանտին ժանտ օրեր.
Պատեսցեն զնովաւ ցընորք մահաստուեր.
Տեսցէ՛ նա զիւր տուն կործանն հիմն 'ի վեր.
Կին նորա, որդիք, մուրասցին անտէր։

Եկեսցէ՛ հասցէ՛ յանկարծ փոխատու
Ընդնորայն քընեալ զինչքն զոր դիզու։
Աչալք անիրաւին տիրեսցեն գանձու.
Մի՛ գլոցի նրմա մի՛ ոք ձեռընտու։
Օ՛ի նա, և նորուն փառք և ամեն ինչ
Յոչընչէ՛ եղեն, եղիցին ոչինչ.
Յիշատակ նորա բարձցի՛ բընաջինջ.
Հոր նորա և մոր մեղք կացցեն անջինջ։
Տեսանեմ՝ որպէս այս այր ապիրատ
Զողորմի ումեք, հալածէ զաղքատ.
Հեզոյն՝ անմեղին գազտ լարէ թակարդ՝
Ինքնին իսկ մահու ելով պատժապարտ։
Օրհնութիւնն յաւէժ պարարող ոսկերց
Երկեաց նա յանձնէ, և իբրու հանդերձ
Ըզգեցաւ զանէծս. անիծեալն յանզերծ
Խաւարին 'ի վիհ իջցէ՛ մերձ ընդ մերձ։
Մինչև ցերբ լըռես, Տէր իմ ծածկատես,
Մինչև ցերբ այդպէս երկայնամըտես։
Աիրտ իմ խըռովի, արդ մեռանիմ ես՝
Թէ չողորմեսցիս, թէ ինձ չօգնեսցես։
Արա՝ զի ոսոխն ըզգեցցի զամօթ.
Հանրասցին նորուն բարբանջք սըտայօդ։
Ես քո՛ եմ ծառայ, քո դըթոյդ կարօտ։
Որ կանխեմ յօրհներգ յամեն առաւօտ։

Մ. Մ.

ԱԳՌԱՒ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Այն ինչ թոյրաթռուխ թըռուցեալ ագռաւ՝
Պանիր 'ի բերան յոստ ծառոյ թառաւ,
,,Ը՛հ, պարոն ագռաւ, գալուստ քո բարեաւ։,,
Զայն երարձ աղուէս, եկաց զառաջեաւ։
,,Մ՛ուր էիր ցայսօր, ասէր, ո՛ եղբայր,
Ընդ ո՞ր վայրս անցեր, կամ՝ հասեր ցո՞ր վայր։
Վ՛ըկայ են ՝ երկինք, զի յանմըխիթար
Ընկըղմեալ 'ի սուգ՝ լայի անդադար։
,,Ա՛ռ անձուկ սիրոյդ՝ յայս կոյս և յայն կոյս
Թարթափեալ՝ անկայ 'ի խոր տարակոյս։
Թէ քո չէր եկեալ՝ հիւծէի անյոյս,
'Ի խաւար դառնայր օրիկս իմ և լոյս։

,,Այլ փառք Աստուծոյ, ողջ ըզքեզ տեսի.
Դայդ անոյշ տեսիլ՝ նոր ինձ ետ ոգի։
Հէ՜հէ՜հէ՜, զի՞նչ այս... զարմանք զիս ունի.
Փոխեա՛լ ես, եղբայր, ասեմ քեզ յայտնի։
,,Դանի՞ գեղալոյս, կըրկներ և գոչեր,
Իրր աստղունք 'ի քեզ պըսպըղտան աչեր.
Ո՞ւր է սիրամարգ, քոյն սեգ հոմասեռ.
Տեսցուք՝ ժըտի՞ գալ ընդ քեզ 'ի վըսեր։
,,Ո՞ւր տատրակ, թուխակ, սոխակ, կաչաղակ.
Ի՞ր սիգան, պանծան, հարուն զաղաղակ։
Ապշեսցի նոցայն պարծուկըն պարուակ
Թէ գամ մի ըզքոյդ լըսիցէ նըւագ։
,,Հա՜ա, ցոյց ըզքեզ, լըսո՛ ըզքո ձայն,
Կարկեա՛ զոսոխաց վայրախօս բերան։
Թէ այդպէս լըռես, նոքա յոխորտան.
Կարծեն՝ թէ յերկրի չէ՛ք իւրեանց Նըման,,։
Օ՜մայլէր յոյժ ագռաւ, կայր խոր ուշադիր
Յայս բան աղուիսուն, 'ի գոլեստ պատիր։
'Ի ձայնել ,,ՀՀ՜ ՀՀ՜,, յերգ կոկորդալիր՝
Ուռոյց ըզխածիսն, անկաւ և պանիր։
,,Օ՜ինչ այս՝ զինչ, պանիր — պանրոյ է Նըման,,
Գոչեաց խաբուսիկն, արկ զայն յիւր բերան։
,,Սո՛ւտ է սո՛ւտ, ասէ, ասածս ամենայն...
Համո՛վ է պատառս քան զքոյդ խըռպոտ ձայն,,։

Մ. Մ.

ԴԻՄԱՌՆՈՒԹԻՆ

ՏԱՊԱՆ ՆՈՑԻ, ԳՐԳՈՒՌ, ՄԱՍԻՍ

ՏԱՊԱՆ

Գ՛ըրգուռ, ա՛ռ զիս,
Գ՛ըրգուռ, ա՛ռ զիս,
Հ՛իւրընկալել
Օ՛իս Թէ կամիս։

ՏԱՊԱՆ

Մ՛ասիս Մասի՛ս,
Ա՛ռ ընկա՛լ զիս,
Օ՛իս որ յոլորտ
Վ՛արիմ յալիս։

ԳՐԳՈՒՌ

Ե՛ռթ 'ի Մասիս,
'Ի վեր քան զիս,
Ընդ՝ ուր յաւէժ
Շ՛ընչէ Հիւսիս։

ՄԱՍԻՍ

Ո՞ր այդ օտար
Զայն՝ յիմ կատար.
Ո՞վ ել կամ էջ
Յահեղս 'ի վայր։

ՏԱՊԱՆ

Ես եմ՝ Նոյեան
Ջրաղերծ կայան,
Մարդկան աղգի
Լոր Որորան։

ՄԱՍԻՍ

Յարկդ աննեցուկ,
Ջրոյց տուր ըստոյգ.
Յանկոխն 'ի ջուրց
Պըրծեան ոյք ոյք։

ՏԱՊԱՆ

Նոյ, Նոյեմղար *),
Ջարմիւ արդար,
Յիս զԷնն 'ի մի
Գովեն բարբառ։

ՄԱՍԻՍ

Բարի՛ եկիր
Ո՛ շընչակիր
Լաստդ ապրացու,
Ե՛կ յիս հանգիր։

ՏԱՊԱՆ

Ովո՛ւր երանի
Վրեզ, լեառն յայտնի,
Ջի քոյն՝ ինեւ՝
Վայր սուրբ օրհնի։

Մ. Մ.

Գրեալ յամի Տեառն 1826, 'ի մենաստանի Ս. Յ. Մծբնայ Հայրապետի՝ որ առ ստորոտովն Մասեաց։

ՋԱՑԼ ՇԱՄԻՐԱՄԱՑ

Ի ՎԵՐԱՑ ԱՐԱՑԻ ԱՆԿԵԼՈՅ Ի ՄԱՐՏԻ

Հրաշալին այն Արայն,
Արայն այն... ո՞ւր Այրն այն։
Զարոյն արդ երկիր
Ծրծէ ըզշիթս արևան։
Սիրոյ սուր Սիրայնոյս
Շեշտ յիմ անց 'ի ներքոյս։
Դիւթք, յոփոյն 'ի խորոյ,
Ըզսա հանէք 'ի լոյս։
Սա զիւր ըզլուսանիշ
Ունի զակն 'ի յիս՝ պիշ.
Այլ ո՞ գիտէ՝ ոգին
Յո՞ր օթէ կայս՝ որիշ։

Ահ, զաւուրց՝ սա ինեւ
Ջանոյշ չետես զարեւ.
Օշ թէ այժմ ըզսա Դիք
Տային ինձ 'ի պարգեւ։
Թէ 'ի ճար չեն բըժիժք,
Ուժէ իսկ ոչ բըժիշկ
Ռուժել հաստոյր ըզվէրսն
Յանոյշ հիւթ կենսաւիշկ....։
Վո՞ է, Արայդ քընքուշ,
Վո՞ այդ նըռներանգ թուշ...
Գամ՝ մի ըզքեզ տեսեալ՝
Հարայ համայն յապուշ։

Մ. Մ.

---

*) Անուն կնոջն Նոյի։

ԱՐԱՑ

Արայ՝ որդի քաջի Նահապետին մերոյ Արամայ, կացեալ իշխան 'ի վերայ Հայոց յետ մահուան հօր իւրոյ՝ սիրեցաւ և պատուեցաւ ոչ միայն յաղգայնոց իւրոց, այլ և 'ի Նինոսէ յարքայէն Ասորւոց, և նորոգ զարդարեալ զՀայաստան պէս պէս բարեկարգութեամբք՝ երջանկացոյց զբնակիչս նորին։ Սմին իրի 'ի պատիւ անուան նորա և 'ի յիշատակ յաւէժական, նոյն իսկ աշխարհն՝ որոյ գլխաւոր քաղաք էր Արմաւիր, կոչեցաւ՝ կամ Յայլոց[1]), և կամ 'ի նմին իսկ (Արայէ՝[2]) Աբաբաբ կամ Այբաբաբ, որպէս և իշխանութիւնն կամ տէրութիւնն Հայոց՝ Աբաբաբեան։ Եւ այս յայտնի ցուցանի 'ի բանից մարգարէին Երեմիայ, որ ասէ 'ի դիմաց Աստուծոյ ,,Պատուէր տուք յինէն Արարատեան թագաւորութեանցն և Ասքանազեան գնդին,, (Երեմ. ծ՚, 27)։

Սա ինքն Արայ գեղեցիկ էր յոյժ տեսլեամբ, և վայելուչ հասակաւ։ Ուստի թագուհին Ասորւոց Շամիրամ՝ 'ի ձեռն պատգամաւորաց հրաւիրեաց զնա բաղում անգամ դալ 'ի Նինուէ և առնուլ զինքն 'ի կնութիւն։ Իսկ 'ի մերժելն Արայի զայնպիսի անարժան հրաւէր՝ դիմեաց 'ի վերայ նորա պատերազմաւ։ Եւ թէպէտ զգուշացոյց ևս զզօրսն կենդանի պահել զցանկալին իւր, սակայն նա, (որպէս պատմէ Յովհաննէս Կաթողիկոս՝ առեալ 'ի Խորենացւոյ), ,,'ի մէջ պատերազմի մարտկացն անգիտաբար վէրս ընկալեալ մեռաւ,,։

Յորժամ լուաւ Շամիրամ զմահուանէ Արայի, առաքեաց դիակապուտս՝ խնդրել 'ի մէջ դիականցն անկելոց զմարմին Արայի։ Եւ 'ի գտանել նոցա զայն՝ հրամայէ դնել 'ի վերնատան ապարանաց։ Իսկ յորժամ խորհէին զօրքն Հայոց տալ պատերազմ ընդ Շամիրամայ՝ պատճառ եղելոյ մահուան թագաւորին իւրեանց, պատասխանի ետ նոցա Շամիրամ. ,,Հրամայեցի աստուածոցն իմոց լեզուլ զվէրս նորա, և կենդանասցի,,։ Քանզի ակն ունէր նա միանգամայն դիւթութեամբ վհկութեան իւրոյ կենդանացուցանել զԱրայ. բայց լցաւ ոչ՝ այն ակնկալութիւն նորա, զի նեխեցաւ դի նորա, և հարկ եղև Շամիրամայ տալ ընկենուլ զայն 'ի վիհ մեծ և ծածկել. և փոխանակ նորա զարդարեալ դմի ոմն յիւրոցն հոմանեաց՝ համբաւ ելեալ, թէ՝ ,,Լիցեալ աստուածոցն զԱրայ՝ յարուցին 'ի կեանս, որով և լցին զփափաք մեր և զհեշտութիւն. վասն որոյ առաւել յայսմ հետէ պաշտելիք են 'ի մէնջ և փառաւորեալք իբրև հեշտացուցիչք և կա-

---

[1]) Ըստ Խոր. գիրք Ա. գլ. ժե. ժզ։

[2]) Ըստ Յովհ. Կաթ. էջ 13 'ի նոր տպ։

մակատարք։։։ Եւ 'ի հաստատութիւն այսր համբաւոյ՝ կանգնեալ պատկեր յանուն դիւայ, մատոյց նմա զոհս 'ի շնորհակալութիւն, որպէս թէ զօրութիւն աստուածոյն կենդանացուցեալ ի՛ցէ զԱրայն [1]։

'Ի պատմութիւն անցելոց հայեցեալ ոմանց 'ի մերոց մատենագրաց՝ համարեցան, թէ բառս յաբելեղ կամ աբելեղ և կամ աբելեղ՝ ստուգաբանելի ի՛ցէ աբայ ենղեղ. բայց ըստ ճշդագոյն քննութեան՝ որ տեսանի 'ի Վէպսն հնոյն Հայաստանի [2]) հաւանականագոյն ևս թուի ստուգաբանել ։։յաբ։։՝ այսինքն՝ միշտ կամ անդադար ենղեղ. զի ըստ հին աւանդութեան Հայոց՝ գործ այնոցիկ աստուածոց՝ էր լեզուլ զվէրս անկելոց 'ի պատերազմի։

ԶԱՐՄԱՑՐ ՄՆԵՐԵԱՆՑ

ՆՈՒԷՐ ԲԱՆԴ

ԱՌ Տ. ՆԵՐՍԷՍ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Մինչդեռ ոգի բանասիրին ՀԱՅրարատեան Մուզայից
Ըղձիւցաղանց քաղէ համբաւ, հագներդ լսէ ըզվեհից,
Լռանդ ջերմիկ տածէ յանձին, ճաշակ առնու հեշտալից,
Զի և 'ի տան մերոյս Հայկայ երմոսք հնչեն ոգելից։
Ծայրագունին ապա 'ի վեհս՝ ուր են հանդէսք, որ Մուզայ
Մեզ դաշնակել մատն քերցէ յոսկի քընար Եւտերպեայ։
Դուռ յիս աղդեա՛, Ամենակա՛լ Հոգիդ Աստուած, սիւգ շնորհաց,
'Ի բան հակիրճ ձըդել զեմ տող՝ նըւէր Վեհիս Հայկաղանց։
'Նա աւանիկ՝ որ Եթերին ակնապարար Լուսարփեաց
Շնորհես փայլել՝ բոցաճաճանչ լոյս զանաղօտ զամբարաց,
Եւ զեմ մըտաց Դու փարատեա թաւ վարագոյր մթաղդեաց,
Զննել բացուստ զԱյր հոյակապ, զԱյրարատայ շուք փառաց։
Բաբունապետ մեծ Պարթևին ո՞չ նոյն ի՛ցէ Սա տիպար,
Նոյն և անուն համբաւատենչ, նոյն և հանդէսք դերափառ։
Սըմա Արէս յակճիռս երբեմն եկաց 'ի դոռ 'ի մարտին,
Յաղթանակաբ մինչ դարձ առնէր ճակատամարտ ընդ պարսկին։
Լ՚ր տեսանել անդ դարձադարձ բանից յուղմունք 'ի պայքար
Ընթենասայ ընդ Արեսի. ։։Ո՞ ոք ի՛ցէ վեհ այս Այր։։։

---

[1]) Խոր դիրք Ա. գլ. ժե։

[2]) Տպ. 'ի Մոսկվա 'ի 1850 (էջ 82)։

,,Սիրող է Սա, ասէր Արէս, քաջարութեանց անբաւից,
Տ՚ես խումբ քանի՞ Դա առաթուր ետ կոխատել ըզՊարսից։
Հաղը քանի՞օն արկ ըզնոսա յաղատութիւն հայրենեաց,
Մաքրեալ բընիկ զիւրն Այրարատ՚ի ճիւաղաց այլազգեաց։
Ապա իմոց Դա շուք բերէ քաջավարժիկ հրահանգաց,
Որում մընան դալնի պակք, քան Հոմերին դիւցազանց։
Յայս վայր անդէն հատ Աթենաս բանիցն ըզթել զԱրեսի,
,,Մի՛ դու խաբիր, քա՛ջդ աստուածոց, ասաց, կալաւ ոճ բանի.
Թաբուն է դա՝ ո՛չ տեսանես՝ բազմեալ՚ի Գահ սրբութեան,
Փութայ անդուլ, տրքնի անխոնջ՚ի սէր Ազգին շինութեան։
Եւ այս կանգնեաց ինձ Աթենայ՝ շընքեղ տաճար՚ի Տփխիս,
Մանկանց՚ի վարժ՚ի կրթութիւն, շահել անձանց բիւր բարիս.
Պարծանք ըզՍ Արամազնեայց կարդան մանկունք որ ինև,
Նոր Մեկենաս Հայոց մեծաց, յազգէ բընիկ՚ի Պարթև։
Եւ զի լեցիս քաջ խելամուտ զոր քեզ ասեմ ես աստէն,
Լո՛ւր զինչ մաղթէ վասն Սորա ողջ Հայաստան ար Մեծ Էն։
Տո՛ւր Տէր, ասէ, Հայրապետիս մեր ՆԵՐՍԻՍԻ կեանս երկար,
Հովուել զիւր հօտ ըզլուսածին, խնամել ըզնա Հայրաբար։

Ոգեալ՚ի Բ՚ռնոռնիրկ ռ՚ՄԵՆԻ։

Յամի Տեառն 1843.
՚ի Մայիսի 16։

Ծանօթ. Սկզբնատառք տանցն յօդեն զբանդ ,,Մեծդ Ներսէս Հայրապետ,,։

ՏՓԽԻՍ

Յայն կոյս Կովկասեան բարձրաբերձ լերանց
Երեւի ահա՛ քաղաք բազմագանձ,
Զոյր գեղեցկաշէն տեսիլ հոյակապ
Ներկարագրեմ՝ աստ բանիւ տողաչափ։
՚Ի միում կողման բլուրք բարձրանան՝
Զարդարեալ ծաղկամրք՚ի գոյն զանազան,
Ուր կայ և կանգնեալ փոքրիկ ինչ դըղեակ
՚Ի վերայ լերին՝ իբրեւ պայծառ թագ։
Եւ է շրջապատ պարըսպօք ամուր,
Առ որով բըղխէ աղբիւր ջերմաջուր։
Յայլում կողման են տափեր գեղեցիկ,
Եւ ուրեք ուրեք պարտէզք և այգիք։

Ընդանօր և հօտք խաշանց արածին,
Այլեն անդադար գառինք նորածին։
Ընդ մէջ քաղաքին ընթանայ գետ կուր
Ուժգին յորձանօք 'ի ճերմակ փրփուր,
Ողողանելով միշտ զայգեստանեայս
'Ի ներսի՝ դրրսի և յօրթայ ջալայս։
Սոյն այս գեղեցիկ տեղն լեռնափակ
Ա՛յն է՝ որ կոչի ՏՓԽԻՍ մայր քաղաք։
Զբաղարձալի է սորայս երևոյթ՝
Մինչ լուսատուն մեծ [1]) յիւր մերձենայ մուտ.
Նոր գեղեցկութիւն լերինք ըզգենուն
'Ի կարճատեւն յայն 'ի լոյս շառագոյն։
Յորժամ յերեկոյս վառին ճրագունք,
Յիւրաքանչիւր տան արք՝ կանայք՝ մանկունք
Սիրով ժողովեալ յերդ, 'ի պար, 'ի խաղ,
Լսին, ծիծաղին, կեանս վարեն ուրախ։
Ո՛վ իմ հայրենի քաղաք պատուական
Ա՛յս քեզ եղիցի սիրոյ իմ նշան։
Թեզ յինէն նուէր այս տողք չափաւորք։
Եւ դու զԱստուածածնէ ամենայն ըզգիտութիւն,

որ է

Աշակերտ Լազարեան Ճեմարանի։

---

[1]) Արեգակն։

ՌԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

—

Ի ԲԱՆԻՑ ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ

ՑԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՐԲԱՌ

ԳԱՍՊԱՐ ԹԱԳԱՒՈՐԻ ԳԵՐԵԶՄԱՆՆ

Հայաստանի Մոկաց նահանգումը Ամենափրկիչ անուամբ մի մեծ վանք կայ. այն վանքի միջումն է գերեզմանն Գասպար Թագաւորի, որոյ համար ըստ հին աւանդութեան պատմեն այն կողմանց բնակիչքն, թէ էր նա միոն այն երեք մոգուց՝ որք գնացին 'ի Բեթղեհեմ յերկրպագութիւն Քրիստոսի, ինչպէս գրած է Մատթէոս Աւետարանիչն [1]. և ասեն ևս՝ թէ երբ որ նա միւս երկու ընկերակցաց հետ (որք էին՝ Մելքոն և Բաղդասար Թագաւորքն) վերադառնայր յիւր երկիրը, յայս տեղս հասած ժամանակին՝ վախճանուեր է և թաղուեր [2]: Այս յիշէ և մեր Վարդան աշխարհագիրն՝ այսպէս գրելով ,,Մոկաց գաւառն է իշխանանիստ, ուր կան բաղում վանորայք, նախ՝ Ամենափրկիչն, ուր կայ գերեզման Թագաւորին մոգուց Գասպարայ [3]:

Այս աւանդութիւնս անհիմն չհամարելոյ իրաւունք տան մեզ՝ նախ կարծիքն այն օտարազգի հին մատենագրաց (Պետաւիոսի, Կուռնելիոսի Ալափիտեայ և այլոց), որք համարում են՝ թէ նախայիշեալ երեք մոգքն եկած են 'ի Բեթղեհեմ՝ ոչ յԱրաբիայէն, այլ՝ 'ի Միջագետաց աշխարհէն՝ որ Երուսաղէմի Արևելեան կողմը անկանի, և Հայաստանի Մոկաց նահանգէն հեռի չէ [4]. երկրորդ՝ նոյն իսկ անուանակոչութիւնն այն վիճակի՝ ուր գտանի վերոյիշեալ Ամենափրկիչ վանքն, վասն զի կոչւում է մինչև ցայսօր Մոգ», և աղաւաղմամբ՝ Մէգ»:

Մ. Մ.

---

[1]) Մատթ. Բ. 1:

[2]) ՅԱշխարհագր. Ասիոյ հատ. Ա. յէջ 161:

[3]) 'Ի Պատրագր. հին հայատ. յէջ 136:

[4]) 'Ի Հնախօս. հայատ. հատ. Դ. յէջ 53 — 54:

ՀԵՂԻՆԷԻ՝ ԱԲԳԱՐ ԹԱԳԱՒՈՐԻ ՏԻԿՆՈՋ ՇԻՐԻՄՆ

Յետ Աբգար Թագաւորի մահուան, երբ որ նորա յաջորդքն Անանէ և Սանատրուկ Թագաւորքն, և նոցա հետ նաև նախարարքն Հայոց, Թողլով քրիստոնէական սուրբ հաւատքը՝ դարձան վերստին 'ի հեթանոսութիւն և սկսան կուռք պաշտել, այն ժամանակ մեծահաւասան և բարեպաշտն Հեղինէ՝ առաջին քրիստոնեայ Թագուհին՝ որ նստէր Խառան քաղաքումը, չկամելով այնպիսի հեթանոսամիտ և խառնակրօն մարդոց մէջ բնակիլ, եկաւ գնաց Երուսաղէմ, 'ի 42 Թուականին Քրիստոսի: Եւ որովհետև այն ժամանակը սաստիկ սով էր այն կողմերումը, բացաւ իւր գանձը, ցորեան բերել տուաւ Եղիպտոսէն և բաշխեց չքաւորաց: Բայց յայտնի՝ և տաճարի աշտանակը ոսկեղէն շինել տուաւ իւր ծախիւքը, ինչպէս վկայէ և Յովսէպոս Հրէայ Պատմիչն [1]): Այս պատճառաւ երբ որ մեռաւ նա, մեծաւ փառօք Թաղեցին զնորա մարմինը Երուսաղէմի դրան առաջիւը՝ փառաւոր շիրիմ կանգնելով վերայն. որոյ համար Եւսեբիոս Պամփիլոս՝ եկեղեցական պատմութեանց հայրն [2]) (չորրորդ դարումը), և մեր Մովսէս Խորենացին [3]) (հինգերորդ դարումը) գրում են՝ թէ մինչև իւրեանց ժամանակը կանգնած կայր, այսինքն՝ դեռ չէր քանդուած:

Այս շիրմի որպիսի լինելը պատմում է Պաւսանիաս Յոյն մատենագիրն [4]): ,,Այս, ասում է նա, Երուսաղէմ քաղաքումը Հեղինէ տիկնոջ շիրիմն՝ զարմանալի շինուած մարմարեայ քարերով, որոյ դուռն բացւում է տարւոյ մէկ պայմանեալ օրումը և ժամումը մեքենայական դաղտնի շարժմամբ, և յետ փոքր ժամանակի փակւում է ինքնին: Բայց յայլ ժամանակումը չէ կարելի ուրիշ կերպիւ բանալ զայն, եթէ ոչ խորտակելով '':

Մ. Մ.

---

[1]) 'Ի Հնախօս. գիրք Է. գլ. Ը:
[2]) Եկեղեց. պատմ. Բ. 12:
[3]) 'Ի Պատմ. Հայ. Հատ. Բ. գլ. Լ:
[4]) Յարկադ. դիրս. գիրք Ը:

ԿԱՐՄԻՐ ՁԻՒՆ

Ձիւնն՝ որովհետև յօդումը սառած ջրային շոգիներից գոյանայ, սովորաբար սպիտակ լինի. և սպիտակ գոյնն այնքան յատուկ է ձիւնին, մինչ զի 'ի սկզբանէ անտի սովորութիւն է եղած ամենայն ազգաց մէջ՝ որ և իցէ սպիտակ իրի առաւել կամ չափազանց սպիտակութիւնը յայտնելոյ համար՝ նմանեցուցանել զայն Ձիւնի. և ըստ այսմ գտնում ենք գրոց մէջ գովութեամբ յիշուած ,,Ձի-նափոյն ջորի, Ձի-նանման կամ Ձի-նափայլ պատմուձան'' [1]: Եւ սոկէս և Մատթէոս աւետարանիչն՝ Քրիստոսի դերեղմանի վէմը թաւալեցնող հրեշտակի համար գրում է ,,Եւ էր տեսիլ նորա իբրև զփայլակն, և հանդերձ նորա սպիտակ իբրև զձիւն (իբ. 2)'': Եւ որովհետև սպիտակութիւնն մաքրութեան նշան է, այսու մտօք Դաւիթ մարգարէն ևս իւր աղօթքումը առ Աստուած (սաղ. Ճ. 9) ասէր ,,Լուա՝ և քան զձիւն սպիտակ եղէց'' այսինքն՝ մաքրեցայց:

Եւ թէպէտ այս այսպէս է, բայց պատմութեանց մէջ կարդում ենք, թէ ժամանակ ժամանակ ուրիշ դունով ևս ձիւն եկած է աշխարհի զանազան կողմերումը, ինչպէս Մատթէոս Ուռհայեցին (որ մեր միջին դարերու Պատմագրաց մին է) գրում է իւր Պատմութեան գրոց մէջ, թէ ,,եկն 'ի յաշխարհն Պարսից սեաւ ձիւն'': Եւ դարձեալ նոյն հեղինակն պատմում է՝ թէ 'ի շէ թուականին Հայոց (այսինքն՝ 'ի 1058 թուին փրկչական) Հայաստանի՝ Զորրորդ Հայք և Աղձնիք կոչեցեալ նահանգներումը կարմիր ձիւն է եկած. ,,Մէկ օր, ասում է նա, երբ որ օրն լուսանում էր, և ամեն մարդ իւր տանէն դուրս ելաներ, տեսին ցամաք գետնի վերայ կարմիր ձիւն, որ ծածկած էր գրեթէ բոլոր այն երկրի չորս կողմը'' [2]: Այս դիպուածս իբր հրաշալի կամ նորանշան բան երևեցաւ այն երկրի բնակչաց, և մեծ երկիւղ պատճառեց նոցա, որովհետև դեռ այսպիսի բան տեսած չէին, և չգիտէին թէ յայլ ժամանակ ևս եկած է կամ թէ կարէ գալ այսպիսի նորանշան ձիւն: Ուստի նախայիշեալ

---

[1]) Տե՛ս յընդարձ. բառարանի մէջ:

[2]) Երևի՝ թէ այս է և Սմբատ պատմագրի պատմածն, որ իւր գրքումը (էջ 57) գրում է ,,'ի սոյն ամ 'ի ձմեռն երեկ (այսինքն՝ եկն) խիստ ձիւն վաթսուն օր. գիշերն գայր՝ ցերեկն հալէր. և էր ջուրն կարմիր և լեղի'':

Ուռհայեցի Պատմիչն զայս դիպուածը պատմելոյ ժամանակին՝ այսպէս է սկսում բանը ,, Եղև նշան ահաւոր և հրաշալի ‘‘: Սակայն յետ այնորիկ և այսպիսի դիպուած պատահած է Հայաստանումը (թոզ ուրիշ աշխարհներումը պատահածները), ինչպէս վկայէ Մխիթար Այրիվանեցին՝ գրելով թէ 'ի շկ թուին Հայոց (յամի Տեառն 1111) ,, յամառն կարմիր ձիւն եկն չորս մատն ‘‘ այսինքն՝ 4 մատ թանձրութեամբ:

Այսպիսի նորանշան ձիւներու բնական պատճառաց վերայ՝ զանազան են բնագիտաց կարծիքն, զորս մեք աւելորդ համարիմք այս տեղս յառաջ բերել՝ ձանձրութիւն չտալոյ համար ընթերցողաց: Բայց ցանկացողքն կարեն գտանել Հասարակախօսութիւն Աշխարհագրութեան ասացեալ գրքումը յէջ 341 — 343:

Մ. Մ.

ՔԵԱՓԻՐ ՎԱՐԴ, ԵՐԿԳՈՒՆԵԱՆ ՎԱՐԴ

Հայաստանի զանազան դաւառներումը՝ զանազան գեղեցիկ և անուշահոտ վարդեր գտանւում են. որոց մէջ ընտիր և յարգի է Քեաֆիր վարդն՝ որ բուսանում է Խնուսի մօտ Խամլբերդ ասացեալ լեռնումը, ինչպէս երևում է այն ռամկական երգէն՝ որոյ սկիզբն է

,, Խամլբերդի վերևէն
Քեաֆիր վարդի տերևէն ‘‘:

Բայց աւելի զարմանալի է երկգունեան վարդն, որոյ թերթերի մի կողմն դեղին է, և միւս կողմն՝ կարմիր, և հոտովն նման է դեղնագոյն վարդի: Այս տեսակ նորանշան վարդ գտանւում է առաւել Բաղեշոյ սահմաններումը [2]):

Մ. Մ.

---

[1]) Տես յԱշխարհագր. Ասիոյ հատ. ա. յէջ 80:
[2]) Նոյն գրքումը. յէջ 169:

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍԿԻԶԲՆ

ՐԻՒՐԻՔ (862 — 879)

'Ի 859 թուականին Նովգոռոդացւոց մէկ ամբոխն մնաւ Սլաւեանաց երկիրը, և տիրեց Իլմենայ ափերուն։ Նովգոռոդացիք զայս անբերկիւղ եկաւորները կարողացան հալածել, բայց փոքր ինչ ժամանակ անցանելէն յետոյ՝ նոցա մէջ երևեցաւ ուրիշ թշնամի, նեղքին շփոթ՝ անիշխանութեան հետևանք. ազգ ազգի վերայ յառնում էր և դատաստանական իրաւունք չկայր։

Նովգոռոդացիք, Կրիվիչք և նոցա դաշնակից տոհմերն, վաստակելով մէկ մէկի հետ պատերազմելէն, և վախնալով նորեկ անբերկիւղ ծովագնացներէն, մոքերնին դրին՝ ընտրել իւրեանց իշխան, այսինքն ծայրագոյն կառավարիչ՝ դատաւոր և պաշտպան, և 'ի 862 թուականին հրաւիրեցին իւրեանց մօտ զՐիւրիք Նորմանտացւոց Դիւցաղնը, որ ընկերասէր Ռուսաց տոհմէն էր։ Սլաւեանաց դեսպանքն ասացին նմա և նորա եղբարցը. ,,մեր երկիրն մեծ է և առատ, բայց միջումը կարգ չկայ. եկէք տիրեցէք և իշխեցէք մեր վերայ''։ Րիւրիք իւր ամենայն ազգատոհմովն և երկու եղբարցը հետ՝ որոց անուանքն էին Սինէուս և Թրուվոր, անցաւ Սլաւեանաց երկիրը 'ի 862 թուին, և իւր տերութիւնը հիմնեց Լատոգայումը, Նովգոռոդումը, Իզպորքումը և Պէլօզերքումը, և վերջի ժամանակները Մուրմումը և Ռոսթովումը։ Հին երկիրն՝ ուր այս քաղաքներս էին, և ուր որ Ռիւրիք միասին իշխանի պէս տիրէր՝ յետ մահուան նորա եղբարցն՝ ստացաւ Ռուսաստան անունը. և մայրաքաղաքն էր Նովգոռոդ [1])։

Զ. Ս.

---

[1]) 'Ի պատմ. Ռուս. Ուսարեալովի,

ՄՈՍՔՈՒԱՅԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆՆ

Որովհետև Առաքաղիս տպագրութիւնն Մոսքուա քաղաքումն է լինում, այս պատճառաւ պատշաճ համարիմք այս առաջին տետրակիս մէջ այնոր հիմնադրութեան վերայ մէկ քանի համառօտ տեղեկութիւններ տալ:

Մոսքուա քաղաքն Ռուսաստանի հին մայրաքաղաքն է, և իւր անունն առած է Մոսքուա գետէն՝ որ այնոր միջէն է անցանում: Հիմնադրութեանը վերաբերեալ տեղեկութիւնքն սակաւ են: Պատմըւում է՝ թէ Օլէկ, Ռուրի խնամակալն (опекунъ), Նովկորոտէն Գրիեվ գնալոյ ժամանակը 'ի 882 թուականին հիմնած է այս տեղ Նէկլինայա ասացեալ գետակի եզերումը մէկ փոքրիկ քաղաք: Այլք կարծում են՝ թէ նորա հիմնադրութիւնն առաւել 'ի հին ժամանակէ է, որովհետև Մոսկո անունը Մոսքէն հանում են: Երկոտասանեւորդ դարումը այս կողմերս պատկանում էին Վլատիմիրեան կամ Սուզտալեան իշխանութեան: Այս տեղ կային մէկ քանի դիւղերայք, որք Պոյար Ստեփան Իւանովիչ Ռուչքոյի սեպհական կալուածքն էին: Գրեմչի տեղումը, սոճի ծառոց թաւ անտառի մէջ (въ дремучемъ бору) բնակում էր ճգնաւոր մի: Այն դիւղերի մէկին մէջ՝ որ Մոսքուա էր կոչւում, Սուզտալեան իշխանն, Իւրիյ Վլատիմիրովիչ Տոլկորուքի 'ի 1147 թուականին 'ի մարտի 28ին ճաշկերութի հրաւիրեց զիւր դաշնակից քնեազ Սվեատոսլավը Սեվերքայ. և տեղւոյն դեղեցիկ դրիցը շատ հաւանելով՝ Ռուչքոյին դնեց, և հրամայեց շինել անդ փոքրիկ բերդաքաղաք՝ զոր և Մոսկվա (Москва) անուանեց: Յետ այսորիկ տարեդրաց մէջ պատմըւում է՝ թէ Վսեվոլոտի երրորդի ժամանակը ('ի 1176 թուականին), Մոսքուան մեծիր դարձուցուած է Կլէպէն՝ որ Բեաղանու Իշխան էր, և թէ 'ի 1237 և 1293 թուականներին Թաթարք տիրեր են այս քաղաքիս և բոլորովին աւերեր են զայն, բայց ապա կրկին անդամ Տանիել Ալեքսանդրովիչ Իշխանի Ջանիբէն նորէն շինուեր է, և Մոսքովեան կալուածական իշխանութեան (Московскаго удѣльнаго княжества) մայր քաղաքն եղեր է[1]): Ահա այսպէս եղև Մոսքուայի հիմնադրութիւնն:

Զ. Մ.

---

*) Տես «Справочный Энциклопедическій Словарь А. Старчевскаго» անուանեալ գրքումը, հատ. Ը:

ՓՐԿՉԱԿԱՆ ԴՈՒՌՆ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ

(Спаскія ворота въ Москвѣ)



Փրկչական կոչուած Դուռն՝ որ Քրեմլուն է, Մոսքուա քաղաքի մէջ, հին ժամանակը կոչուար էր Ֆրոլովեան (Фроловскими), և հիմնուած է Իւան երրորդ Վասիլեվիչի ժամանակը 'ի 1491 թուին: Ամենայն երևելի հանդէսների ժամանակ՝ միշտ նորա տակէն անցանեն: Այս Դրան այժմեան կոչումն է այն Փրկչական պատկերի անունէն՝ որ Խլընովէն (изъ Хлынова) բերուած է, որոյ և օրինակն միշտ նորա վերայ մնայ, ունելով առաջևը կախուած մշտավառ կանթեղ: Դէ 'ի յիշատակ՝ վերոյիշեալ պատկերի ընդունելութեան, Փրկչական անուանեցաւ և Դուռն, որոյ՝

տակէն անցանողքն՝ (եթէ այր մարդիկ են) ըստ հրամանի Ալեքսէյ Միխայիլովիչի՝ պարտաւոր են իւրեանց գլուխը հանելոյ։ Այս Դրան գլխումը բարձրացած կայ աշտարակաձև շինուած, որոյ վերայ Պետրոս Թագաւորի հրամանաւ դրուած է մի զանգակաւոր մեծ ժամացոյց, որպէս ցուցանէ նոյն Դրան իսկական պատկերն՝ զոր պատշաճ համարեցաք դնել վերը։ Շինուածոյ բարձրութիւնն է 29 սաժէն։ Մինչև ցայսօր մնացած կայ նորա վերայ մէկ արձանագիր Լատիներէն, որոյ Ռուսերէն և Հայերէն թարգմանութիւնն այս է.

»Іоаннъ Васильевичъ, Божіею милостію Великій Князь Владимірскій, Московскій, Новогородскій, Тверской, Псковскій, Вятскій, Угорскій, Пермскій, Болгарскій и иныхъ, и всея Россіи Государь, въ лѣто тридцатое государствованія своего, велѣлъ построить сію башню, а строилъ ее Петръ-Антоній Селярій Медіоланскій, въ лѣто воплощенія Господня 1491« *).

,,Իւան Վասիլեվիչ, Աստուծոյ օգնականութիւն Մեծ Իշխան Վլատիմիրայ, Մոսքուայ, Նովկորոտայ, Թվերսքայ, Փսքովայ, Վեաթսքայ, Ուկորսքայ, Փէրմայ, Պոլկարիոյ և այլոց, և Կայսր բոլոր Ռուսիոյ՝ 30 երորդ ամի թագաւորութեան իւրոյ, հրամայեաց շինել զաշտարակս զայս, և հիմնեաց զայն Պետրոս Անտոնէյ Սելեարիյ Մեդիոլանացի, յամի տեառն 1491,,։

Այս աշտարակս քանի մի անգամ նորոգուած է, բայց միշտ իւր հին ձևը պահպանելով։

Այս Փրկչական Դրան երկու կողմը մի մի մատուռ կայ, որոց մէջ Քրիստոսի, Աստուածածնի և այլոց սրբոց պատկերքն դրուած են։ Աջակողմեան մատրան մէջ այլ պատկերաց հետ, կայ և մեր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի պատկերն՝ արծաթապատ զարդարեալ։

Զ. Մ.

ԼԵԶՈՒ

(Մարմնեղէն գործի խօսելոյ)

Ամէն մարդոյ յայտնի է՝ թէ լեզուն ինչ է, և ինչի համար 'ի գործ ածի, և անհաւատալի երևի՝ եթէ ասուի թէ առանց լեզուի ևս կարելի է խօսիլ։ Բայց այս ևս անկարելի չէ, ինչպէս յայտնի ցուցանեն հետևեալ օրինակներդ։

*) Справоч. Энциклоп. Слов. А. Старчевскаго, т. IX, стр. 540.

ա. Արենատեան բժիշկներն՝ Յովսէփ Հիլլան և Յովսէփ Բաէթանο տէլ Բասթիլլ, վկայեցին 1774 թուականի վերջերումը՝ թէ շատ ժամանակ չէր անցած՝ որ ունէին նոքա իւրեանց ձեռքումը եօթն կամ ութ տարեկան տղայ մի՝ ծաղիկով հիւանդ, և թէ՝ յետ այս հիւանդութեան այն տղայի լեզուն ընկեր է, և թէ՝ տղայն այս պակասութեանս հնայելով, փոքր ինչ մեծանալէն յետոյ սկսեր է խօսիլ, և ճշդութեամբ յստակ արտաբերել նաև դժուարահնչիւն վանկերը։

բ. Ֆրանչքում ասացեալ դիւղաքաղաքումը կայր կին մի, որ թէ և լեզու չունէր, բայց խօսէր, երգէր, ուտէր և խմէր այնպէս ըստ կարգի՝ ինչպէս և ուրիշներն՝ որք լեզու ունէին։ Այս կինս՝ իւր մարդոյն հետ ման գալոյ և զինքը փողով ցուցանելոյ ժամանակին՝ խոստովանում էր, թէ ծննդեամբ փուսթ քաղաքէն է եղած։ Նորա ասածին նայելով, իւր լեզուէն զրկուած է եօթն տարեկան ժամանակին, երբ որ ծաղիկով հիւանդացած էր. երկու տարի համր է մնացած, և յետոյ փոքր փոքր սովորած է առանց լեզուի խօսել՝ բերանը զանազան կերպ ծռմռելով։

գ. Փարիզու Պայսերական Հեմարանին գրուածներուն մէջ՝ որք վերաբերումեն 1708 թուականի անցքերուն, պատմըւում է՝ թէ Լուսի՝ փորթուկալիայումը Արաֆ տը Ռիչայրիի մօտ գտնուած ժամանակը, տեսեր է մէկ աղջիկ տասն և հինգ տարեկան, ծննդեամբ Լալլենթէժօ գիւղէն, որ անլեզու ծնած էր, և այս պակասութեանը հնայելով՝ շատ հեշտ խօսումէր. միայն այս էր պակասութիւնն՝ որ մէկ քանի գիր չէր կարողանում արտաբերել։ Եւ այս պատճառաւ՝ մէկ Փորթուկալացւոց իշխան, որոյ մօտ Լուսին բնակում էր, դրած է հեսկեաալ երկու տող Լատիներէն ոտանաւորը.

Non mirum, elinguis mulier quod verba loquatur;
Mirum, cum lingua quod taceat mulier.

այսինքն

Զարմանք չէ, եթէ անլեզու կինն բառեր արտաբերէ,
Մայլ զարմանք է, եթէ լեզու ունող կինն չխօսի։

Զ. Մ.

ԹՈՒՐԻՆՃ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԵՐԳՆ

ՆԱԽԱՍՏԵՂԾԻՑ (ԱԴԱՄԱՑ ԵՒ ԵՒԱՑԻ) ՎԵՐԱՑ

Ա՛յլն Աստուած է՝ որ ստեղծեց հայր Ադամին մայր Եւային,
Ո՛ւենն բերաւ լուսեղէն զարդ, հագցրոյց հարսին ու փեսային.
Գիմն գանչեց նստացրոյց 'ի լոյս դրախտին Եդեմային.
Դ՛ան դրախտն էր, շատ կայր պտուղ, չարն ու բարին չիմանային.
Ե՛չն եկաւ նըշանակեց իւր զօրութեամբն Աստուածային.
Օ՛ան զրոյց արաւ օձի հետն, մտաւ բերանըն վերացաւ.
Ի՛ն էս կերպիւ խաբեց նրանց ,,Աստուած դառնայք'' ո՛չ, չիմացան,
Ը՛թն ըշտապեց Աստուածանալ, կերան պտուղըն, մերկացան.
Թ՛ոն թափեց լուսեղէն զարդն, փառք ու պատուիցըն զրկուեցան.
Ժ՛էն ժանտ օձին զուր խօսելոյն ճշմարտապէս հաւատային։
Ի՛նն իմացաւ, ,, ի՞նչ եղաւ, կանչեց, Ա՛դամ ապնուական''։
Լ՛իւնն լոկ մերկ էր մարմնով, չունէր հագուստն սեպհական։
Խ՛էն խաբեց ինձ ,,կեր էս պտղէն, խիստ համեղ է ախորժական''։
Ծ՛ան ծիծաղեց, ասաց ,,մի՛թէ չունիք կերակուր բաւական։
Կ՛էնի կամքն կատարեցիք, այժմ դարձայք խաւարային''։
Հ՛ոն հիւանդ էր, չտեսաւ նա, կուրացեալ էր հոգւոյ ակն։
Ձ՛ան ձախ ձգեց ամէն բանը, մթնեց պայծառ արեգակն։
Ղ՛ատն ղարաղով [1]) ասաց թէ՝ ես կբերեմ լոյս ճրագն։
Ղ՛էն ճար չունէր, քարին դրեց մուշտուլուխ զարմուզաւակն։
Մ՛էնն մեղի տուաւ ծառայ հոգւով մարմնով սատանային։
Յ՛ին յերբ առաւ ձեռնագիրը, տարաւ ձգեց գետ Յորդանան։
Ն՛ուն նեղութիւն շատ տուէց, էն էր նախանձ չար սատանայն։
Շ՛ան շատ կլանեց սուրբ հոգիքը՝ որ ածեց դժոխքը, լիանան։
Ո՛ն ոխացաւ, ուզեց որ աղատին հոգիքն ամենայն։
Չ՛ան չկամեցաւ շուտով գալ, կամքն էր ստեղծող արքային։
Պ՛էն պարգևն Աստուծոյ էր, իջաւ յերկնից խոնարհական։
Ջ՛էն ջահ վառուած բընակեցաւ յարդանդ կուսին հաւանական։
Ռ՛ան ռահիւ ծնաւ անսերմն կատարեալ մարդ մարմնական։
Ս՛էն սուրբ մարմնով չարչարեցաւ, խաչեցաւ կամաւորական։
Վ՛ենն վասըն մեր մեռաւ, որ թաղեցաւ անդնդային.
Տ՛իւնն տերն մեր երեքօրին յարեաւ փառօք դերեզմանէն։
Ր՛էն բամեալ ընդ երկնայնոց՝ համբարձաւ յերկինս 'ի յերկրէն։
Ց՛ոն ցաւակից սուրբ հոգիքն աղատեցիր 'ի մահուանէն.

---

[1]) Ղ՛արաղ. «խ»։

Լեւոն լիւծեալ է խեղճ հոգիս, որ կապեալ կայ 'ի չար ախտէն։
Փիւրն Քրկիչ, փրկեա զանձինս 'ի տանջանաց և 'ի բանտէն.
Քրիստոս, զքեզ օրհնեմք, զՀայր և զՍուրբ Հոգիդ, ամէն.
Ն օր տուր յարքայութեան՝ մեղաւոր Թուրինճ Պանտային։

ՆՈՐԱՆՈՐ ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԳԻՒՏԵՐ

Ամերիկայումը Պ. Թրօուի և նորա ընկերութեան տպարանումը երկու մեքենայ գործում են. մէկն ջրող (composeing), և միւսն ցրող (distributing)։ Այս երկու մեքենայով հեշտ կարելի է շարել և ցրուել տառերը, առաւել ածան տպել գրքերը և աւելի պակաս ունենալ գրաշարները։ (M. f. d. L. d. A.)

Տրէզտէն քաղաքումը, Վինդէրի խանութումը ծախուումէ լինարին (линаринъ) անունով ջուր, որով կարելի է իմանալ՝ թէ կտաւի մէջ բամբակ կայ, թէ ոչ։ Երբ որ այս ջրէն կաթիլ մի կտաւի վերայ կաթեցնեն՝ եթէ կտաւի մէջ բամբակ կայ, բամբակն սպիտականայ, իսկ եթէ չկայ՝ կտաւն սեւանայ։ (Ill. Ztg.)

Փրակա քաղաքումը Ռիսոլէտէր անուն փիրոֆեսսորն հնարած է այնպիսի ջուր, որով՝ եթէ փայտ կամ տախտակ քսուած լինի՝ երբէք չայրիր։ (H. C.)

Թուրին քաղաքումը գտնուած Ռափիտաչչիօլի ինժեներն խոստանում է հնարել այնպէս հայելի՝ որ ծալուի և չկոտրուի։ Այսպիսի հայելիի նկարագրութիւնն տպուած է Տինքլէրի օրագրումը։ (Ж. О. С.)

Լէյպցիկ քաղաքումը այժմ սկսեալ են 'ի գործ ածել մի նոր տեսակ թուղթ (Delius-Papier), որոյ վերայ գրում են այլ նորահնար թանաքով։ Նոյն գրուած թուղթը կարելի է լուանալ, և ապա չորացնելէն յետոյ, դարձեալ գրել նորա վերայ։ Այս թուղթը Պերլին քաղաքի ուսումնարաններումը արդէն սկսեալ են 'ի գործ դնել։ (Rigach. Zeit. № 160).

»Prakt. Wochenbl.« լրագրումը գրում են, թէ եթէ մարդ խցի պատերը դափնիի իւղով քսէ, ճանճ չմտանէր յայն խուցը։

ՎԵՐՋԱԲԱՆ

Ահա այս տողերովս Ռաքաղիս առաջին տետրակն աւարտի. բայց թէ միջումը պարունակուած նիւթքն որչափ պիտի կարողանան ընթերցողաց ախորժակը շատացուցանել, այն մեզ յայտնի չէ։ Թէպէտ և մեր բուն նպատակն այն է՝ որ սոյն դուշնաքեայ աշխատասիրութեամբս իբրու ծայրիւ մատին փոքր ինչ բանասիրական ճաշակ տամք բարեմիտ ընթերցողաց ըստ իւրաքանչիւր կարդի, այնպէս՝ որ գիտնական անձինք և Հայկաբանութեան պարապող ուսումնասէրնչ մանկունք թէ՛ այս և թէ՛ յաջորդ տետրակաց մէջ գտանեն իւրեանց ախորժակին համեմատ՝ դրոց բարբառով ընտիր ընտիր հատուածներ 'ի հին և 'ի նոր մատենագրաց, նոյնպէս և այն անձինք՝ որոց դժուարահասկանալի է դրոց բարբառն, գտանեն աշխարհիկ լեզուաւ՝ զանազան՝ գիտելոյ արժանի տեղեկութիւններ աղգային անցից վերայ, Հայաստան աշխարհն հանքաց՝ բուսոց ծառոց՝ ծաղկանց՝ գետոց՝ լերանց՝ քաղաքաց՝ գիւղից՝ երևելի շինուածոց վերայ, ևս և քաջագործ և առաքինի անձանց կենաց՝ և գործոց վերայ, այլոլքն հանդերձ. սակայն այսու ամենայնիւ՝ կարծեմք թէ՝ հարկ պիտի լինի մեզ սակաւ մի սպասել ստուգիւ իմանալոյ համար՝ թէ արդեօք կա՞ յոյս՝ անշուշտ մեր նպատակին հասանելոյ, թէ ոչ։

Եթէ Ռաքաղիս կարդն, աշխարհիկ լեզուի ոճն, և նիւթոց ընտրութիւնն հաւանական երևին մեր ամենասիրելի առողջախորհուրդ հայրենակցաց, և եթէ բարեհաճին նոքա վեհանձնաբար (ինչպէս յոյս ունիմք) ձեռնտու և օգնական լինել գործոյս յարատևութեան, մեք ևս աղգասիրական պարտք պիտի համարիմք մեզ՝ շարունակել մեր վաստակը, ջանալով միանգամայն՝ որչափ կարելի լինի՝ յաւելացուցանել յաջորդ տետրակներումը օգտաւէտ՝ զուարճալի և իմաստալից տեղեկութիւններ, և գուցէ նաև վայելչագիծ նկարներ և պատկերներ։

Էջ 20. տող 11. զկնի բառիցս «Ցառաջ ։» յաւելցէ ընթերցողն զտողն 'ի բաց թողեալ 'ի գրաշարէ. «զմահ գէպասցո՛ւ և հաւապասցո՛ւ, էին անդր ։»

ՑԱՆԿ

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

Ի քանից հին Մատենագրաց։

Ա. Գովեստ 'ի Ս. Աստուածածին կոյսն Մարիամ։

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

Ի քանից նոր Մատենագրաց։

Ի հրոց բարբառ։

Բ. Համառօտագիր պատկեր Հայաստանի։
Գ. Քարոզ յօր Տեառնընդառաջի։
Դ. Տէրունական աղօթք։
Ե. Իմաստք ճշ. երգոց սաղմոսի։
Զ. Ագռաւ և Աղուէս։
Է. Դիմառնութիւն. Տապան Նոյի, Գրգուռ, Մասիս։
Ը. Զայլ Շամիրամայ 'ի վերայ Արայի։
Թ. Արայ։
Ժ. Նուէր լանի առ Տ. Ներսէս Ե Կաթողիկոս ամենայն Հայոց։
ԺԱ. Տփխիս։

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

Ի քանից նոր Մատենագրաց։

Յաշխարհիկ բարբառ։

ԺԲ. Գասպար Թագաւորի գերեզմանն։
ԺԳ. Հեղինէի՝ Արգար Թագաւորի սիկնոջ՝ շիրիմն։
ԺԴ. Կարմիր Ձիւն։
ԺԵ. Քեաֆիր վարդ. Երկգունեան վարդ։
ԺԶ. Հին պատմութիւն Ռուսաստանի — Ռիւրիք։
ԺԷ. Մոսքուայի հիմնադրութիւնն։
ԺԸ. Փրկչական Դուռն Մոսքուայի մէջ։
ԺԹ. Լեզու։
Ի. Թուրինդ՝ բանաստեղծի երգն՝ նախաստեղծից (Ադամայ և Եւայի) վերայ։
ԻԱ. Նորանոր արուեստական գիւտեր։
ԻԲ. Վերջաբան։